

Եվրոպական վիճակագրական համակարգի
որակի ապահովման շրջանակ

Տարբերակ 2.0

Բովանդակություն

Բովանդակություն.....	2
Ներածություն.....	4
Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ.....	4
Ինստիտուցիոնալ միջավայր.....	7
Սկզբունք 1 Պրոֆեսիոնալ անկախություն.....	7
Սկզբունք 1bis Համակարգում և համագործակցություն.....	15
Սկզբունք 2 Մանդատ տվյալների հավաքման համար.....	20
Սկզբունք 3 Ռեսուրսների համապատասխանություն.....	27
Սկզբունք 4 Որակի հանձնառություն	31
Սկզբունք 5 Վիճակագրական գաղտնիություն	37
Սկզբունք 6 Անկողմնակալություն և օբյեկտիվություն.....	43
Վիճակագրական գործընթացներ.....	48
Սկզբունք 7 Հիմնավորված մեթոդաբանություն	49.
Սկզբունք 8 Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր.....	54
Սկզբունք 9 Ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածություն	62
Սկզբունք 10 Ծախսերի արդյունավետություն.....	67
Վիճակագրական արտադրանք	76
Սկզբունք 11 Համապատասխանություն	70

Սկզբունք 12 Ճշգրտություն և արժանահավատություն.....	74
Սկզբունք 13 Յուրաժամանակություն և ճշտապահություն	76
Սկզբունք 14 Համաձայնեցվածություն և համադրելիություն	79
Սկզբունք 15 Մատչելիություն և պարզություն	83

Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ

Տարբերակ 2.0

Ներածություն

Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ընդհանուր շրջանակ

Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակի (ԵՎՀ ՈԱՇ) 2019 թ. հրատարակությունը (տարբերակ 2.0) հաջորդում է Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի (ԵՎ ՓՕ)¹ 2017 թ. վերանայմանը և համաձայնեցվում դրա հետ: Որակի ընդհանուր կառավարման սկզբունքների հետ միասին ԵՎ ՓՕ-ն ու ԵՎՀ ՈԱՇ-ը կազմում են ԵՎՀ որակի ընդհանուր շրջանակը, որի հիման վրա մշակվում, արտադրվում և տարածվում է բարձր որակի եվրոպական վիճակագրությունը:

Այս ինքնակարգավորվող որակի ընդհանուր շրջանակը լրացնում է Եվրոպական վիճակագրական համակարգի ընդարձակ իրավական շրջանակը, որը հիմնված է Եվրոպական վիճակագրության մասին թիվ 223/2009թ. Կանոնակարգի (ԵՀ) վրա², որն էլ ինքնին բխում է Եվրոպական Միության գործունեության մասին պայմանագրից³: Բարձր որակի եվրոպական վիճակագրությունն ու ծառայությունները, հետևաբար, մշակվում, արտադրվում և տարածվում են շատ ամուր իրավական և որակի շրջանակում:

¹ Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքը՝ <https://ec.europa.eu/eurostat/web/products-catalogues/-/KS-02-18-142>

² Եվրոպական վիճակագրության մասին թիվ 223/2009 թ. Կանոնակարգ (ԵՀ)՝ փոփոխված թիվ 2005 թ./759 Կանոնակարգով (ԵՄ)՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:02009R0223-20150608&from=EN>

³ Եվրոպական Միության գործունեության մասին պայմանագիր՝ <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:C:2016:202:FULL&from=EN>

ԵՎՀ ՈԱՇ-ի նպատակն ու թիրախային խումբը

ԵՎՀ ՈԱՇ-ն օժանդակ փաստաթուղթ է, որը միտված է ԵՎ փորձառության օրենսգրքի իրականացման օժանդակմանը: Ինչպես ԵՎ փորձառության օրենսգիրքը, ԵՎՀ Որակի ապահովման շրջանակը կիրառվում է եվրոպական վիճակագրական համակարգի վիճակագրական մարմինների համար, որը բաղկացած է Եվրոպական Միության վիճակագրական մարմնից (Եվրոստատ), Ազգային վիճակագրական ինստիտուտներից (ԱՎԻ) և ազգային այլ մարմիններից (ԱԱՄ), որոնք պատասխանատու են եվրոպական վիճակագրության մշակման, արտադրման ու տարածման համար: ԵՎ ՓՕ որոշ սկզբունքներում, ցուցանիշներում, ԵՎՀ ՈԱՇ մեթոդներում, գործիքներում, փորձառություններում անդրադարձը «այլ վիճակագրական մարմիններին» պետք է հասկանալ որպես «մնացածը Եվրոստատի ու ԱՎԻ-ի սահմաններից դուրս», այսինքն՝ ազգային այլ մարմիններ (ԱԱՄ):

ԵՎՀ ՈԱՇ-ն հանդիսանում է մեթոդների, գործիքների և լավ փորձառությունների հավաքածու, որոնք խորհուրդ են տրվում օգտագործման համար և/կամ արդեն օգտագործվում են Եվրոպական վիճակագրական համակարգի որոշ վիճակագրական մարմինների շրջանում, որտեղ դրանց օգտակարությունն արդարացված է: ԵՎՀ ՈԱՇ-ի նպատակն է ուղեկցել ԵՎ Փորձառության օրենսգիրքը՝ տրամադրելով ուղղորդում և օրինակներ առավել մանրամասն մեթոդների և գործիքների տեսքով, ինչպես նաև լավ փորձառություններ ԵՎ Փորձառության օրենսգրքի (բավականին) բարձր մակարդակի սկզբունքների և ցուցանիշների համար:

Համաձայն ԵՎՀ որակի ընդհանուր շրջանակի ինքնակարգավորվող բնույթի՝ այս մեթոդները, գործիքները և լավ փորձառությունները կրում են ոչ պարտադիր բնույթ և, հետևաբար, պարտադիր չեն վիճակագրական մարմինների համար: Թվարկված մեթոդները, գործիքները և լավ փորձառությունները ցույց են տալիս, թե ինչպես կարող է ԵՎ Փորձառության օրենսգիրքը կիրառվել վիճակագրական մարմնի առօրյա աշխատանքում՝ համապատասխանաբար հաշվի առնելով ազգային հանգամանքները:

ԵՎՀ ՈԱՇ-ի կազմակերպումն ու զարգացումը

Առաջարկված մեթոդները, գործիքներն ու լավ փորձառությունները սահմանվում են որպես ինստիտուցիոնալ և վիճակագրական գործընթացի/արդյունքի մակարդակով՝ անդրադարձնելով դրանց ընդունման, կիրառման և/կամ օգտագործման

ամենահարմար մակարդակը: Թվարկման մեջ դրանք աճում են ընդհանուր տեսանկյունից մինչև առավել հստակ ու մանրամասն նկարագրությունը: Պետք է ընդգծել, որ որոշակի մեթոդը, գործիքը կամ լավ փորձառությունը (ոչ էականորեն փոփոխված ձևակերպմամբ) կարող է թվարկվել ի աջակցություն մի քանի ցուցանիշների և ԵՎՀ ՈԱՇ-ում այս մեթոդների, գործիքների և լավ փորձառությունների հաճախ կրկնվող բնույթը արվում է միտումնավոր, քանի որ այն հետևում է ԵՎ Փորձառության օրենսգրքում կիրառված մոտեցմանը:

ԵՎՀ ՈԱՇ-ի ներկայիս 2.0 տարբերակը պատրաստվել է ԵՎՀ ՈԱՇ աշխատանքային խմբի կողմից, որը Վիճակագրության որակի աշխատանքային խմբի ենթախումբ է, և Եվրոստատի կողմից և հաստատվել է Եվրոպական վիճակագրական կոմիտեի կողմից 2019 թ. մայիսին: Այն ոգեշնչվել է վերանայված ԵՎ Փորձառության օրենսգրքից, Եվրոպական վիճակագրության վերաբերյալ 223/2009 Կանոնակարգից, ԵՎՀ փորձագիտական գնահատման երկու փուլերից, ԵՎՀ տեսլականի իրականացման նախագծերի արդյունքներից և քաղված դասերից, ԵՎՀ անդամների ներկայիս վիճակագրական փորձառություններից, ինչպես նաև այլ միջազգային նախաձեռնություններից և զարգացումներից, ինչպիսիք են Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենքը (ՄԱԿ-ի ԵՏՀ)⁴ և Վիճակագրական օրենսգրքի մոդեռնիզացման մասին ուղեցույցը⁵:

Մինչ պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենքը (ՊՎՄՄՕ) տրամադրում է իրավական հիմք ազգային վիճակագրական համակարգի գործունեության և բարձր որակի պաշտոնական վիճակագրության արտադրության համար Արևմտյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համատեքստում, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի աշխատանքային խումբը, որը ստեղծվել է ուղեցույցի փաստաթղթերը մշակելու համար, կառուցել է իր աշխատանքը ՄՎՄՄՕ-ի հիման վրա: Վիճակագրական օրենսգրքի մոդեռնիզացման մասին ուղեցույցը սահմանում է վիճակագրական օրենսգրքի ընդհանուր տարրերը և դրանց ակնկալվող արդյունքները՝ ներշնչելու երկրներին, որոնք ցանկանում են հենանշել կամ արդիականացնել իրենց ազգային վիճակագրական համակարգի (ՄՎՀ) իրավական շրջանակը՝ ընդունելով, սակայն, որ երկրներում վիճակագրական համակարգերը

⁴ Պաշտոնական վիճակագրության մասին մոդելային օրենք՝ http://www.unece.org/fileadmin/DAM/stats/documents/ece/ces/2016/mtg/ECE_CES_2016_8-1601555E.pdf

⁵ Վիճակագրական օրենսգրքի մոդեռնիզացման մասին ուղեցույց՝ <http://www.unece.org/index.php?id=51141>

կազմակերպված են տարբերվող եղանակներով: Ամեն անգամ, երբ ԵՎՀ ՈԱՇ-ում հղում է կատարվում օրենսդրության վերաբերյալ միջազգային ուղեցույցին, կարող է անդրադարձ կատարվել այս երկու փաստաթղթերին:

ԵՎՀ ՈԱՇ-ի հետագա զարգացումները

ԵՎՀ ՈԱՇ-ը բաց է մնում մեթոդների, գործիքների և լավ փորձառությունների հավաքագրման հետագա արդիականացումների համար և այս համատեքստում հետագայում սերտորեն կհետևի ԵՎ Փորձառության օրենսգրքի զարգացմանը:

Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակ

Տարբերակ 2.0

Ինստիտուցիոնալ միջավայր

Ինստիտուցիոնալ և կազմակերպական գործոնները զգալի ազդեցություն ունեն Եվրոպական վիճակագրություն մշակող, արտադրող և տարածող վիճակագրական մարմնի արդյունավետության և արժանահավատության վրա: Համապատասխան սկզբունքներն են՝ պրոֆեսիոնալ անկախությունը, համակարգումն ու համագործակցությունը, տվյալների հավաքման համար մանդատը, ռեսուրսների համապատասխանությունը, որակի հանձնառությունը, վիճակագրական գաղտնիությունը, անկողմնակալությունը և օբյեկտիվությունը:

Սկզբունք 1. Պրոֆեսիոնալ անկախություն

Վիճակագրական մարմինների պրոֆեսիոնալ անկախությունը այլ քաղաքականությունից, կարգավորող կամ վարչական վարչություններից և

մարմիններից, ինչպես նաև մասնավոր հատվածի օպերատորներից երաշխավորում է եվրոպական վիճակագրության արժանահավատությունը:

Ցուցանիշ 1.1. Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի անկախությունը քաղաքական և այլ արտաքին միջամտությունից վիճակագրության մշակման, արտադրման և տարածման մեջ սահմանված է օրենքում և ապահովված այլ վիճակագրական մարմինների համար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի պրոֆեսիոնալ անկախություն:** Ազգային վիճակագրական օրենքը ներառում է դրույթ Ազգային վիճակագրական ինստիտուտների պրոֆեսիոնալ անկախության սկզբունքի մասին: Եվրոպական վիճակագրության կանոնակարգը ներառում է դրույթ Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի պրոֆեսիոնալ անկախության սկզբունքի մասին:
- 2. Այլ վիճակագրական մարմինների պրոֆեսիոնալ անկախություն:** Օրենսդրությունն առկա է երաշխավորելու այլ վիճակագրական մարմինների պրոֆեսիոնալ անկախությունը:
- 3. Օրենսդրության նախագծի կազմում:** Ուղեցույցի միջազգային փաստաթղթերը և/կամ այլ երկրներից լավ փորձառությունն ընդօրինակվում են վիճակագրությանն առնչվող օրենսդրության նախագիծը կազմելիս:
- 4. Օրենսդրական պաշտպանություն:** Վիճակագրությանն առնչվող օրենսդրությունը խթանելու/պաշտպանելու նպատակով առկա են ուղեցույց և համապատասխան կառավարման կառույցներ՝ օժանդակելու երկրի օրենսդրական ընթացակարգի հաստատմանը:
- 5. Պրոֆեսիոնալ էթիկայի օրենսգիրք:** Պրոֆեսիոնալ էթիկայի օրենսգիրքը հասանելի և մատչելի է հանրության համար:
- 6. Անձնակազմի իրազեկվածություն:** Բոլոր վիճակագրական մարմինների անձնակազմներն իրազեկվում են իրենց պրոֆեսիոնալ էթիկայի օրենսգրքի վերաբերյալ՝ պաշտոնական վիճակագրության համար:

Ցուցանիշ 1.2. Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարներն ու, անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինների ղեկավարներն ունեն բավականաչափ բարձր հիերարխիկ դիրք՝ ապահովելու բարձր մակարդակի մուտք քաղաքական իշխանություններին և վարչական պետական մարմիններին: Նրանք բարձրագույն պրոֆեսիոնալ մակարդակի են:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների հիերարխիկ դիրքը:** Ազգային վիճակագրական օրենքը/օրենսդրությունը նախատեսում է Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների բարձր հիերարխիկ դիրքը: Այն ներառում է անհրաժեշտ որակավորումների, գիտելիքի և ղեկավարի ներուժի վերաբերյալ ընդհանուր պահանջները:
- 2. Այլ վիճակագրական մարմինների ղեկավարների կարգավիճակը:** Առկա է օրենսդրություն, որը նշում է այլ վիճակագրական մարմինների ղեկավարների կարգավիճակը: Այն ներառում է անհրաժեշտ որակավորումների, գիտելիքի և ղեկավարի ներուժի վերաբերյալ ընդհանուր պահանջները:
- 3. Ուղեցույց որակավորումների, գիտելիքի և ներուժի վերաբերյալ:** Առկա է օրենսդրություն ղեկավարների ստանդարտ/համապատասխան որակավորումների, գիտելիքի և կարողությունների ձևակերպման վերաբերյալ:
- 4. Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի դիրքորոշումը:** Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի դիրքորոշումն է իրենց համապատասխան հանրային կառավարման մեջ ապահովել իրենց պրոֆեսիոնալ անկախությունը, և այն կարող է ոգեշնչվել այլ երկրներից կամ միջազգային կազմակերպություններից լավագույն փորձառությունների խորհրդակցության միջոցով:

Ցուցանիշ 1.3. Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարներն ու, անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինների ղեկավարները պատասխանատվություն են կրում ապահովելու, որ եվրոպական վիճակագրությունը մշակվի, արտադրվի և տարածվի անկախ կերպով:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների պարտականություններ:** Ազգային վիճակագրական օրենքը սահմանում է Ազգային վիճակագրական ինստիտուտների ղեկավարների պարտականությունները, իսկ Եվրոպական վիճակագրության կանոնակարգը սահմանում է Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների պարտականությունները՝ ապահովելու վիճակագրության անկախ մշակումը, արտադրությունն ու տարածումը:
2. **Այլ վիճակագրական մարմինների ղեկավարների պարտականություններ:** Առկա է օրենսդրություն, որը նշում է այլ վիճակագրական մարմինների ղեկավարների պարտականությունները՝ ապահովելու վիճակագրության անկախ մշակումը, արտադրությունն ու տարածումը:
3. **Օրենսդրության նախագծի կազմում:** Ուղեցույցի փաստաթղթերը/լավ փորձառությունն օժանդակում են վիճակագրությանն առնչվող օրենսդրության նախագծի կազմմանը՝ ապահովելու վիճակագրության անկախ մշակումը, արտադրությունն ու տարածումը:

Ցուցանիշ 1.4. Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարներն ու, անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինների ղեկավարները բացառիկ պատասխանատվություն են կրում որոշելու վիճակագրական մեթոդները, ստանդարտները և ընթացակարգերը ու վիճակագրական թողարկումների բովանդակությունն ու ժամկետները:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների վիճակագրական արտադրանքին առնչվող բացառիկ պատասխանատվություն:** Ազգային վիճակագրական օրենքը սահմանում է Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների բացառիկ պատասխանատվությունը, իսկ Եվրոպական վիճակագրության կանոնակարգը սահմանում է Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների բացառիկ պատասխանատվությունը, որն առնչվում է վիճակագրական մեթոդների, ստանդարտների ու ընթացակարգերի վերաբերյալ որոշումներին:
2. **Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների թողարկումների ժամկետներին ու բովանդակությանն առնչվող բացառիկ**

պատասխանատվություն: Ազգային վիճակագրական օրենքը սահմանում է Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների բացառիկ պատասխանատվությունը, իսկ եվրոպական վիճակագրության կանոնակարգը սահմանում է Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների բացառիկ պատասխանատվությունը, որն առնչվում է վիճակագրական թողարկումների ժամկետներին ու բովանդակությանը:

3. **Այլ վիճակագրական մարմինների վիճակագրական ղեկավարների վիճակագրական արտադրանքին առնչվող բացառիկ պատասխանատվություն:** Առկա է այլ վիճակագրական մարմինների համար օրենսդրություն, որը երաշխավորում է, որ այլ վիճակագրական մարմինների ղեկավարներն ունենան բացառիկ պարտականություն, որն առնչվում է վիճակագրության մեթոդների, ստանդարտների ու ընթացակարգերի վերաբերյալ որոշումներին:
4. **Այլ վիճակագրական մարմինների վիճակագրական ղեկավարների վիճակագրական թողարկումների ժամկետներին ու բովանդակությանն առնչվող բացառիկ պատասխանատվություն:** Առկա է այլ վիճակագրական մարմինների համար օրենսդրություն, որը երաշխավորում է, որ ղեկավարներն ունեն բացառիկ պարտականություն, որն առնչվում է վիճակագրական թողարկումների ժամկետներին ու բովանդակությանը:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

5. **Վիճակագրական մեթոդաբանության մշակման և իրականացման ընթացակարգ:** Առկա է վիճակագրական գործընթացների մեթոդաբանության մշակման և իրականացման ընթացակարգ: Այս ընթացակարգը հաստատվում է համապատասխան վիճակագրական մարմնի ղեկավարի կողմից:
6. **Թողարկման օրացույց:** Թողարկման օրացույցը կամ վիճակագրական թողարկումների ժամանակացույցի կազմումը հաստատվում է Ազգային վիճակագրական ինստիտուտի/այլ վիճակագրական մարմինների/Եվրոստատի ղեկավարի կողմից:

Ցուցանիշ 1.5. Վիճակագրական աշխատանքների ծրագրերը հրապարակվում են, և պարբերական հաշվետվությունները նկարագրում են առաջընթացը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ռազմավարություն:** Ազգային (բազմամյա) ռազմավարությունները հրապարակվում և համապատասխանեցվում են, անհրաժեշտության դեպքում, Եվրոպական վիճակագրական համակարգի ռազմավարական փաստաթղթերի հետ:
2. **Վիճակագրական աշխատանքների ծրագիր:** Վիճակագրական աշխատանքների ծրագիրը (օրինակ՝ ազգային վիճակագրական տարեկան ծրագիրը, Եվրոպական վիճակագրական ծրագիրը և Եվրոպական հանձնաժողովի տարեկան վիճակագրական ծրագիրը) մատչելի է հանրության համար:
3. **Ծրագրի կազմում:** Վիճակագրական աշխատանքային ծրագիր կազմելու գործընթացի ու ընթացակարգերի նկարագրությունը հասանելի է ներքին նպատակների համար:
4. **Վիճակագրական աշխատանքային ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություններ:** Վիճակագրական աշխատանքային ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները կազմվում են կանոնավոր կերպով և մատչելի են հանրության համար:

Ցուցանիշ 1.6. Վիճակագրական թողարկումները հստակ տարանջատվում են և թողարկվում առանձին քաղաքական/քաղաքականության հայտարարություններից:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վիճակագրական արտադրանքների նկարագրություն:** Օգտագործողներին վիճակագրական արտադրանքները նկարագրելու համար ներքին ուղեցույցները, ներառյալ ձևակերպումները, թե ինչպես հայտարարությունները զերծ պահել քաղաքականությունից, մշակվում են և հասանելի են անձնակազմի համար:
2. **Վիճակագրությունը ներկայացնելու վերաբերյալ վերապատրաստումներ:** Վիճակագրական մարմինները երաշխավորում են, որ Ազգային վիճակագրական համակարգի անձնակազմն ապահովված է համապատասխան վիճակագրական վերապատրաստման դասընթացներով՝

իրենց վիճակագրության ներկայացման օբյեկտիվությունը հեշտացնելու համար:

3. **Վիճակագրական թողարկումների սահմանում:** Առկա են ուղեցույցներ հստակորեն սահմանելու վիճակագրական թողարկումները (մամուլի հաղորդագրություններ, մամուլի ասուլիսներ, զեկույցներ)՝ որպես վիճակագրական մարմնի արտադրանքներ:
4. **Ապրանքանիշի սահմանում:** Ազգային վիճակագրական ինստիտուտի/Ազգային վիճակագրական համակարգի և, համապատասխանաբար, Եվրոստատի ապրանքանիշը սահմանվում է: Այն ներառում է լոգո, որը կարող է լայնորեն ճանաչելի լինել իր դիզայնով, ձևաչափով, գույներով ու սխեմայով:

Ցուցանիշ 1.7. Ազգային վիճակագրական ինստիտուտներն ու Եվրոստատը և, անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինները հրապարակավ մեկնաբանում են վիճակագրական հարցերը, ներառյալ՝ քննադատությունները և վիճակագրության սխալ օգտագործումները, որքանով որ համարում են հարմար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վիճակագրական արտադրանքի օգտագործման մշտադիտարկում:** Առկա է ընթացակարգ մշտադիտարկելու վիճակագրական մարմինների վիճակագրական արտադրանքի օգտագործումը: Այն կարող է ներառել, օրինակ, բաժանորդագրությունը լրատվական ծառայությանը կամ ներքին ծառայության առկայությունը, որը տրամադրում է կանոնավոր ընդհանուր ակնարկ օգտագործման վերաբերյալ:
2. **Օգտագործման վերաբերյալ տեղեկացում:** Առկա է ընթացակարգ տեղեկացնելու վիճակագրական արտադրանքի համար պատասխանատու անձանց դրանց օգտագործման վերաբերյալ:
3. **Քննադատության/սխալ օգտագործման վերլուծություն:** Առկա է քննադատության, սխալ օգտագործման և այլնի վերլուծության ու համապատասխան գործողություն ձեռնարկելու համար պատասխանատու ներքին կառուցվածք:

4. **Արձագանքը քննադատությանը/սխալ օգտագործմանը:** Առկա են ուղեցույցներ, թե ինչպես արձագանքել/միջամտել քննադատությանն ու վիճակագրության սխալ օգտագործմանը:

Ցուցանիշ 1.8. Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ու, անհրաժեշտության դեպքում, այլ վիճակագրական մարմինների ղեկավարների աշխատանքի ընդունման և նշանակման ընթացակարգերը թափանցիկ են և հիմնված են միայն պրոֆեսիոնալ չափորոշիչների վրա: Պատճառները, որոնց հիման վրա պաշտոնավարումը կարող է դադարեցվել, սահմանված են իրավական շրջանակում: Դրանք չեն կարող ներառել պրոֆեսիոնալ կամ գիտական անկախությունը վարկաբեկող պատճառներ:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների աշխատանքի ընդունման և նշանակման պայմանները:** Ազգային վիճակագրական օրենքը/օրենսդրությունը ներառում է դրույթ, համաձայն որի Ազգային վիճակագրական ինստիտուտների ղեկավարների աշխատանքի ընդունումը և նշանակումը հիմնված են միայն պրոֆեսիոնալ չափորոշիչների վրա: Եվրոպական վիճակագրության կանոնակարգը ներառում է դրույթ, համաձայն որի Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների աշխատանքի ընդունումը և նշանակումը հիմնված են միայն պրոֆեսիոնալ չափորոշիչների վրա:
2. **Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների աշխատանքից ազատման պայմանները:** Ազգային վիճակագրական օրենքը/օրենսդրությունը նախատեսում է հիմքեր Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի ղեկավարների ազատման համար և պետք է բացառի պրոֆեսիոնալ կամ գիտական անկախությունը վարկաբեկող պատճառները:
3. **Այլ վիճակագրական մարմինների վիճակագրական ղեկավարների նշանակման և ազատման ընթացակարգերը:** Օրենսդրությունը սահմանում է այլ վիճակագրական մարմինների ղեկավարների աշխատանքի ընդունման և նշանակման ընթացակարգերը, ինչպես նաև այդ մարմինների վիճակագրական ղեկավարների ազատման հիմքերը, որոնք պետք է բացառեն պրոֆեսիոնալ կամ գիտական անկախությունը վարկաբեկող պատճառները:

4. **Օրենսդրական համապատասխանություն:** Օգտագործվում է միջազգային ուղեցույց՝ խթանելու/պաշտպանելու համար աշխատանքի ընդունման և նշանակման չափանիշներն ու ընթացակարգը և վիճակագրական մարմինների ղեկավարների ազատման պատճառները:
5. **Ուղեցույցներ:** Առկա են ուղեցույցներ ազգային մակարդակով, թե ինչպես ձևակերպել չափանիշներն ու ընթացակարգերը վիճակագրական օրենքում/օրենսդրությունում վիճակագրական մարմինների ղեկավարների աշխատանքի ընդունման, նշանակման և ազատման համար:
6. **Աշխատանքի ընդունման և նշանակման ընթացակարգերը:** Ազգային վիճակագրական ինստիտուտի, Եվրոստատի և այլ վիճակագրական մարմինների ղեկավարի աշխատանքի ընդունման ու նշանակման ընթացակարգերը, որոնք հիմնված են միայն պրոֆեսիոնալ չափորոշիչների վրա, մատչելի են հանրության համար:

Սկզբունք 1 bis Համակարգում և համագործակցություն

Ազգային վիճակագրական ինստիտուտներն ու Եվրոստատն ապահովում են բոլոր գործունեությունների համակարգումը եվրոպական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման համար ազգային վիճակագրական համակարգի և եվրոպական վիճակագրական համակարգի մակարդակով համապատասխանաբար: Վիճակագրական մարմիններն ակտիվորեն համագործակցում են Եվրոպական վիճակագրական համակարգի գործընկերության շրջանակում՝ ապահովելու եվրոպական վիճակագրության մշակումը, արտադրումն ու տարածումը:

Ցուցանիշ 1 bis1. Ազգային վիճակագրական ինստիտուտները համակարգում են բոլոր այլ ազգային մարմինների վիճակագրական գործունեությունները, որոնք մշակում, արտադրում և տարածում են եվրոպական վիճակագրությունը: Այս առումով դրանք գործում են որպես միակ կոնտակտային պատասխանատու Եվրոստատի համար վիճակագրական հարցերի վերաբերյալ: Օրենսդրությունը և լավ սահմանված ու հաստատված ընթացակարգերն առկա են իրականացնելու համակարգման դերը ազգային և եվրոպական մակարդակներով:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Իրավական շրջանակ համակարգման դերի համար:** Ազգային վիճակագրական ինստիտուտի դերը՝ որպես ազգային վիճակագրական համակարգի համակարգող, սահմանվում է ազգային վիճակագրական օրենքում:

2. **Չափորոշիչներ այլ վիճակագրական մարմինների համար:** Այլ վիճակագրական մարմիններին սահմանելու չափանիշները նշված են ազգային վիճակագրական օրենքում:
3. **Այլ վիճակագրական մարմինների ցանկ:** Այլ վիճակագրական մարմինները սահմանվում և ցուցակագրվում են պաշտոնական փաստաթղթում:
4. **Կառավարման մարմին:** Ազգային վիճակագրական ինստիտուտը ստեղծում և ղեկավարում է կառավարման մարմինը՝ այս համակարգման դերի համար:
5. **Համակարգման գործիքներ:** Առկա են համակարգման գործիքներ ու խորհրդատվության մեխանիզմներ: Դրանք կարող են ընդգրկել վիճակագրական ծրագրումը, պլանավորումն ու հաշվետվողականությունը, որակի մշտադիտարկումը, մեթոդաբանությունը, տվյալների փոխանցումն ու ներկայացումը եվրոպական վիճակագրական համակարգի և այլ մարմնի վիճակագրական գործողությունների վերաբերյալ:
6. **Համակարգման ընթացակարգեր (ազգային մակարդակ):** Ընթացակարգերը սահմանվում են և առկա են Ազգային վիճակագրական ինստիտուտի համակարգման դերի իրականացման համար:
7. **Հանձնաժողովի որոշում:** Եվրոստատի համակարգման դերը սահմանված է Եվրոստատի մասին հանձնաժողովի որոշմամբ և դրա իրականացումը երաշխավորվում է լավ սահմանված ու հաստատված ընթացակարգերով:
8. **Գործիքներ միակ կոնտակտային պատասխանատուի համար:** Ազգային վիճակագրական ինստիտուտը սահմանում է իր դերը որպես միակ կոնտակտային պատասխանատու Եվրոստատի հետ (բացառությամբ համաձայնեցված դեպքերի և տվյալների փոխանցման, որոնց համար ԱՎԻ-ն միայն կարող է տեղեկացվել ազգային այլ մարմինների (ԱԱՄ) կողմից ուղղակիորեն կատարված տվյալների փոխանցման մասին, եթե ԱԱՄ-ը փոխանցի տվյալները Եվրոստատին): Ազգային վիճակագրական ինստիտուտն ունի առկա գործիքներ՝ այս դերն իրականացնելու համար, օրինակ եվրոպական վիճակագրական համակարգի հանդիպումներին ներկայացուցչության համակարգման միջոցով: Համապատասխան փաստաթղթերը հասանելի են հանրության համար:

9. **Գրավոր համաձայնագրեր այլ վիճակագրական մարմինների հետ:** Ազգային վիճակագրական ինստիտուտը և այլ վիճակագրական մարմիններն ունեն գրավոր համաձայնագրեր եվրոպական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման ընթացքում իրենց պատասխանատվության շրջանակի, Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի և դրանում նշված որակի պարամետրերի և իրենց աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ: Այս համաձայնագրերը կարող են լինել ձևանմուշների հիման վրա կազմված վիճակագրական ծրագրի մաս կամ ընդունել ցանկացած այլ համապատասխան ձև:
10. **Կանոնավոր հանդիպումներ՝ ազգային համակարգումը կառավարելու համար:** Ազգային վիճակագրական ինստիտուտի կողմից վարվող կանոնավոր հանդիպումները անց են կացվում այլ վիճակագրական մարմինների հետ՝ կառավարելու համակարգումն ու ներդաշնակեցումն ազգային վիճակագրական համակարգում:
11. **Համակարգված վերապատրաստման ծրագիր:** Ազգային վիճակագրական ինստիտուտն այլ վիճակագրական մարմինների հետ համագործակցությամբ ստեղծում է համակարգված վերապատրաստման ծրագիր՝ հաշվի առնելով բոլոր վիճակագրական մարմինների կարիքները: Այն ներառում է թեմաներ, ինչպիսիք են որակը, որակի հաշվետվողականությունը, որակի ազգային ուղեցույցների իրականացումը և այլն՝ ըստ անհրաժեշտության: Ազգային վիճակագրական ինստիտուտն այլ վիճակագրական մարմինների հետ ակտիվորեն խթանում է վերապատրաստման ծրագիրը՝ խրախուսելու նրանց կանոնավոր մասնակցությունը:
12. **Տեղեկատվական հարթակ:** Ազգային վիճակագրական ինստիտուտը կառավարում է տեղեկատվական հարթակ կամ այլ տեղեկատվական/հաղորդակցման գործիքներ ազգային վիճակագրական համակարգի համակարգման համար:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

13. **Ոլորտի համակարգում:** Ազգային վիճակագրական ինստիտուտը կազմում է աշխատանքային խմբեր/ժամանակավոր աշխատանքային խմբեր/տարբեր տեսակի հանդիպումներ Ազգային վիճակագրական ինստիտուտի և այլ վիճակագրական մարմինների միջև՝ համակարգելու վիճակագրական

առաջադրանքներն ու որակի խնդիրները որոշակի վիճակագրական ոլորտներում և վիճակագրական ոլորտների միջև:

Ցուցանիշ 1 bis2. Ազգային ուղեցույցները՝ ապահովելու համար որակը եվրոպական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման մեջ ազգային վիճակագրական համակարգում, արտադրվում են Ազգային վիճակագրական ինստիտուտների ղեկավարների կողմից, որտեղ անհրաժեշտ է, դրանց իրականացումը մշտադիտարկվում և վերանայվում է:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Որակի ազգային ուղեցույցներ:** Ազգային վիճակագրական ինստիտուտը ստեղծում և հրապարակում է ազգային ուղեցույցները, որտեղ անհրաժեշտ է՝ ապահովելու Ազգային վիճակագրական ինստիտուտի և այլ վիճակագրական մարմինների կողմից արտադրված եվրոպական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման որակը: Այս որակի ազգային ուղեցույցները կարող են ներառել որակի կառավարում, որակի հաշվետվողականության ստանդարտներ, մեթոդաբանություն և այլն՝ ըստ անհրաժեշտության:
- 2. Որակի ազգային ուղեցույցների իրականացում:** Որակի ազգային ուղեցույցների իրականացումը կանոնավոր կերպով մշտադիտարկվում և վերանայվում է՝ համապատասխան գործիքների և ընթացակարգերի օգտագործմամբ (օրինակ, ինքնագնահատումներ, աուդիտներ և փորձագիտական գնահատումներ):
- 3. Հանդիպումներ այլ վիճակագրական մարմինների հետ որակի վերաբերյալ:** Ազգային վիճակագրական ինստիտուտը այլ վիճակագրական մարմինների հետ կազմակերպում է վիճակագրական և որակի հարցերի վերաբերյալ կանոնավոր հանդիպումներ (օրինակ, եվրոպական վիճակագրության մեջ որակի վերաբերյալ ազգային ուղեցույցների քննարկումների, մշտադիտարկման և վերանայման համար):
- 4. Որակի գնահատման գործիքներ:** Ազգային վիճակագրական ինստիտուտը պատրաստում է որակի գնահատման գործիքներ այլ վիճակագրական մարմինների համար՝ նրանց հետ համագործակցությամբ և տրամադրում համապատասխան օժանդակություն:

Ցուցանիշ 1 bis.3. Վիճակագրական մարմինները շարունակաբար պահպանում և զարգացնում են համագործակցությունը տարբեր մակարդակներով իրար հետ և

Եվրոպական վիճակագրական համակարգի խորհրդատվական մարմինների հետ, ինչպես նաև եվրոպական համակարգի Կենտրոնական բանկերի, ակադեմիական ինստիտուտների և այլ միջազգային մարմինների անդամների հետ, անհրաժեշտության դեպքում:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Համագործակցությունը եվրոպական վիճակագրական համակարգում:** Առկա է քաղաքականություն, որն օժանդակում և խթանում է վիճակագրական մարմինների մասնակցությունը համապատասխան գործունեությունում: Առկա են գործիքներ, ինչպիսիք են հովանավորությունը, հանդիպումները, ցանցերն ու կոնֆերանսները՝ փոխանակվելու գիտելիքով և խթանելու միասին աշխատանքը՝ պաշտոնական վիճակագրությունը միջազգային և ազգային մակարդակներով բարելավելու համար: Աշխատակազմի փոխանակումը եվրոպական վիճակագրական համակարգում այլ երկրների վիճակագրական մարմինների հետ խրախուսվում է:
2. **Տվյալների փոխանակման քաղաքականություն:** Ազգային վիճակագրական ինստիտուտն ունի եվրոպական վիճակագրական համակարգում այլ երկրների վիճակագրական մարմինների հետ տվյալների փոխանակման քաղաքականություն, մասնավորապես փոխադարձ հետաքրքրություններ կայացնող ոլորտներում, ինչպիսիք են՝ հոսքի և հայելային վիճակագրությունը: Քաղաքականությունը հաշվի է առնում գաղտնիությունն ու տվյալների պահպանության պահանջները:
3. **Համագործակցություն եվրոպական վիճակագրական համակարգի խորհրդատվական մարմինների հետ:** Եվրոստատն ու Ազգային վիճակագրական ինստիտուտները հետամուտ են լինում կանոնավոր հիմքով առաջարկներին եվրոպական վիճակագրական համակարգի խորհրդատվական մարմիններից, ինչպիսիք են Եվրոպական վիճակագրական կառավարման խորհրդատվական խորհուրդը (ԵՎԿԽԽ) և Եվրոպական վիճակագրական խորհրդատվական կոմիտեն (ԵՎԽԿ):
4. **Համագործակցություն կենտրոնական բանկերի հետ:** Կանոնավոր հանդիպումներ են անցկացվում Ազգային վիճակագրական ինստիտուտի և Ազգային կենտրոնական բանկի միջև և կնքվում են համաձայնագրեր կամ փոխըմբռնման հուշագրեր: Եվրոպական մակարդակով Փոխըմբռնման

հուշագիրը Եվրոստատի և Եվրոպական կենտրոնական բանկի/Վիճակագրության գլխավոր տնօրենի միջև իրականացվում է Եվրոպական վիճակագրական ֆորումի շրջանակում:

5. **Համագործակցություն գիտական հաստատությունների հետ:** Գործիքները, ինչպիսիք են վիճակագրական զարգացման ընդհանուր նախագծերը, պրակտիկաները, դոկտորական պաշտոնները կամ ակադեմիական սեմինարները օգտագործվում են պահպանելու և զարգացնելու համագործակցությունը վիճակագրական մարմինների և համապատասխան գիտական հաստատությունների միջև:
6. **Համագործակցություն միջազգային մարմինների հետ:** Գործիքները, ինչպիսիք են համատեղ նախագծերը, աշխատանքային խմբերն ու ակադեմիական սեմինարները օգտագործվում են պահպանելու և զարգացնելու համագործակցությունը վիճակագրական մարմինների և միջազգային մարմինների միջև:
7. **Նորարարության խթանում և օժանդակություն:** Ազգային վիճակագրական ինստիտուտների, այլ վիճակագրական մարմինների և Եվրոստատի ղեկավարները խթանում/օժանդակում են նորարարությունը հանրային հաստատությունների, մասնավոր բիզնեսների, ակադեմիական և հետազոտական հաստատությունների, կառավարման մարմինների և այլ տեխնոլոգիական ինովատորների հետ համագործակցության և համաձայնագրերի միջոցով:
8. **Գործընկերություններ վիճակագրական մարմինների միջև:** Խրախուսվում և առկա են համատեղ նախագծեր, որտեղ հնարավոր է, ամրապնդելու գործընկերություններն ազգային վիճակագրական համակարգերի շրջանում և Ազգային վիճակագրական ինստիտուտների ու Եվրոստատի միջև, ինչպիսիք են Եվրոպական վիճակագրական համակարգի ցանցերը, հետազոտությունը, միջազգային համագործակցության նախագծերը:

Սկզբունք 2. Մանդատ տվյալների հավաքման համար և տվյալների հասանելիություն

Վիճակագրական մարմիններն ունեն հստակ իրավական մանդատ հավաքելու և մուտք գործելու տեղեկատվությանը տվյալների բազմակի աղբյուրներից Եվրոպական վիճակագրական նպատակների համար: Կառավարման մարմինները, ձեռնարկությունները և տնային տնտեսություններն ու լայն հասարակությունը կարող

են օրենքով պարտավորված լինել վիճակագրական մարմինների պահանջով հասանելի դարձնել կամ ներկայացնել տվյալներ եվրոպական վիճակագրական նպատակների համար:

Ցուցանիշ 2.1. Վիճակագրական մարմինների մանդատը հավաքելու և մուտք գործելու տեղեկատվությունը տվյալների բազմակի աղբյուրներից եվրոպական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման համար ամրագրված է օրենքում:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Վիճակագրական մարմինների մանդատ:** Վիճակագրական մարմինների մանդատը՝ հավաքելու և մուտք գործելու տեղեկատվությանը տվյալների բազմակի աղբյուրներից, ներառյալ վարչական տվյալներից, եվրոպական վիճակագրական նպատակների համար սահմանված է ազգային վիճակագրական օրենքում և/կամ այլ համապատասխան օրենսդրությունում:
- 2. Օրենսդրության հասանելիություն:** Տվյալների հավաքման և տեղեկատվությանը մուտք գործելու մանդատին վերաբերող համապատասխան օրենսդրությունը հասանելի է վիճակագրական մարմինների կայքի միջոցով:
- 3. Վիճակագրական կարիքների հիմնավորում:** Տվյալները հավաքելու և մուտք գործելու կարիքը հիմնավորվում է հանրության համար մատչելի փաստաթղթերի հիման վրա, որոնք սահմանում են կարգավորիչ, մեթոդաբանական, տեխնոլոգիական կամ վարչական պահանջներ:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

- 4. Տվյալների հավաքման և տվյալներին մուտք գործելու ընթացակարգեր:** Առկա են ընթացակարգեր կառավարելու տվյալների հավաքումն և դրանց մուտք գործելը տվյալների բազմակի աղբյուրներից:
- 5. Տվյալների աղբյուրների ուսումնասիրման ընթացակարգեր:** Յուրաքանչյուր վիճակագրական ոլորտ կանոնավոր կերպով ուսումնասիրում է հնարավոր տվյալների նոր աղբյուրները, ներառյալ մասնավոր տվյալների աղբյուրները և գնահատում է դրանց իրագործելիությունն ու մատչելիությունը՝ վիճակագրության արտադրման համար:

Ցուցանիշ 2.2. Վիճակագրական մարմիններին օրենքով թույլ է տրված արագ և անվճար մուտք գործելու վարչական տվյալներին ու օգտագործել դրանք վիճակագրական նպատակների համար: Նրանք սկզբից ներգրավված են վարչական գրանցումների նախագծման, մշակման և դադարեցման մեջ՝ դրանք ավելի հարմար դարձնելու վիճակագրական նպատակների համար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վարչական տվյալներին մուտք գործելու իրավունք:** Ազգային վիճակագրական օրենքը և այլ համապատասխան օրենսդրությունը սահմանում է, որ վիճակագրական մարմիններն իրավունք ունեն արագորեն և անվճար մուտք գործելու վարչական տվյալներին՝ վիճակագրական նպատակների համար:
2. **Վարչական տվյալներ տիրապետողների պարտավորություն:** Ազգային վիճակագրական օրենքը և այլ համապատասխան օրենսդրությունը սահմանում է վարչական տվյալներ տիրապետողների պարտավորությունը խորհրդակցելու վիճակագրական մարմինների հետ և ներառելու նրանց վիճակագրական նպատակների համար համապատասխան վարչական գրանցումների սկզբնական նախագծման, մշակման և դադարեցման մեջ:
3. **Վարչական տվյալներ տիրապետողների օրենսդրություն:** Վարչական տվյալներ տիրապետողների օրենսդրությունը չի արգելում մուտք գործելու վարչական տվյալներին՝ վիճակագրական նպատակների համար:
4. **Վարչական տվյալներին առնչվող օրենսդրության մշտադիտարկում:** Առկա է այնպիսի ընթացակարգ, ինչպիսին է համակարգի փոփոխությունների նախնական ծանուցումը՝ մշտադիտարկելու զարգացումները, որոնք առնչվում են վարչական տվյալների օգտագործումը ներառող օրենսդրությանը: Զարգացումները վերլուծվում են և գործողություններ են ձեռնարկվում անհրաժեշտության դեպքում:
5. **Համաձայնագրեր վիճակագրական մարմինների և վարչական տվյալներ տիրապետողների միջև:** Առկա են գրավոր համաձայնագրեր վիճակագրական մարմինների և վարչական տվյալներ տիրապետողների միջև՝ գործարկելու իրավական դրույթները: Այս համաձայնագրերը սահմանում են տվյալների ընդգրկվածությունը, հաճախականությունը և մուտքի ժամանակացույցը, ընդհանուր տրամադրման եղանակը, տվյալների ձևաչափը, մեթատվյալները և օգտագործվելիք տեխնոլոգիան: Բացի այդ, դրանք սահմանում են

վիճակագրական մարմինների խորհրդատվության ընթացակարգը/գործընթացը վարչական գրանցումների փոփոխության, դրանց դադարեցման և այլ համապատասխան դեպքերում:

6. **Խորհրդատվություն:** Ազգային վիճակագրական ինստիտուտի կողմից կառավարվող խորհրդատվությունները երաշխավորված են կանոնավոր կերպով քննարկելու նոր պոտենցիալ վարչական գրանցումների մշակումն ու դրանց հետագա նախագծումը: Դրանք կարող են ստանալ պետական մարմինների կոմիտեի, օրինակ նախարարության ձև:
7. **Համագործակցություն:** Առկա են համագործակցության պայմանավորվածություններ՝ նախատեսելու կանոնավոր քննարկումներ վիճակագրական մարմինների և վարչական տվյալների տիրապետողների միջև, որոնք առնչվում են նոր վարչական տվյալների նախագծման ծրագրերին, գոյություն ունեցող վարչական տվյալների բարեփոխումներին կամ դադարեցմանը կամ այլ փոփոխություններին: Սա կարող է տեղի ունենալ հանդիպումների (վիրտուալ կամ ֆիզիկական), քննարկումների/խորհրդատվության հարթակների կամ այլ հարմար եղանակների միջոցով:
8. **Իրազեկման բարձրացում:** Վիճակագրական մարմինները բարձրացնում են օրենսդրության իրազեկումն ու իմացությունը վարչական տվյալների տիրապետողների շրջանում հանդիպումների և տեղեկատվական նստաշրջանների միջոցով:
9. **Տրամադրման ընթացակարգեր:** Առկա են ընթացակարգեր, ներառյալ տրամադրման եղանակը (օրինակ, վիճակագրական մարմնին վարչական գրանցումների տրամադրման հաճախականությունն ու ժամանակացույցը)՝ ապահովելու վարչական տվյալների արագ տրամադրումը: Այս ընթացակարգերը ներառում են վարչական գրանցումների գնահատում՝ ընդգրկման, հասկացությունների ու սահմանումների և որակի ապահովման առումով:
10. **Ստանդարտացված մեթատվյալներ:** Առկա են ընթացակարգեր, որոնք ապահովում են վարչական տվյալների տնօրինողների կողմից ստանդարտացված մեթատվյալների կանոնավոր տրամադրում:

11. **Մուտքի կառավարում:** Մուտքը վարչական տվյալների ռեսուրսներին ենթակա է կենտրոնական կառավարման վիճակագրական մարմիններում:

Ցուցանիշ 2.3. Վիճակագրական մարմինները կարող են ստիպել պատասխանելու վիճակագրական հետազոտություններին՝ հիմնվելով իրավական ակտի վրա:

1. **Իրավական հիմք:** Տվյալ վարչական/օրենսդրական կարգավորման իրագործելիության դեպքում, վիճակագրական մարմինները ազգային վիճակագրական օրենքում և/կամ այլ համապատասխան օրենսգրքում սահմանում են վիճակագրական տվյալների հավաքմանը/տվյալների մուտքի հարցումներին արձագանքելու և, անհատների դեպքում, անձնական տվյալներ տրամադրելու պարտավորությունն ադմինիստրացիաների, ձեռնարկությունների և անհատների վրա դնելու իրավունքը:
2. **Տեղեկատվություն ռեսպոնդենտների համար:** Ռեսպոնդենտներին տրամադրվում է պատասխանելու պարտավորության վերաբերյալ հստակ տեղեկատվություն և այն հասանելի է դառնում վիճակագրական մարմինների կայքում: Տեղեկատվությունը բացատրում է չպատասխանելու վերաբերյալ իրավական դրույթներն ու պատժամիջոցները:
3. **Կանխազդիչ միջոցներ:** Առկա է կանխազդիչ միջոցների քաղաքականություն, ինչպիսիք են հիշեցումները, հնարավոր խթանները, հարցաթերթերի ու ռեսպոնդենտների հետ հաղորդակցման բարելավումը՝ պատասխանելիության գործակիցը բարելավելու համար:
4. **Պատժամիջոցներ:** Առկա է քաղաքականություն, որը սահմանում է պատժամիջոցներ հետազոտություններին չպատասխանելու համար և այն հասանելի է վիճակագրական մարմինների կայքում:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

5. **Պատասխանելը խրախուսելու միջոցներ:** Ձեռնարկվում են միջոցներ խրախուսելու և ապահովելու վիճակագրական հետազոտությունների պատասխանները: Դրանք կարող են ներառել.

- Ավտոմատ հիշեցման համակարգ,
- Հիշեցում ռեսպոնդենտներին, որ պատասխանը պարտադիր է (եթե կիրառելի է, համաձայն օրենսդրության),

- Հետազոտության և դրդապատճառների մասին մանրամասն տեղեկատվության տրամադրում ռեսպոնդենտներին (օրինակ՝ տեղեկություն, թե ինչ վիճակագրության է վերաբերում հարցումը, հետազոտության նպատակն ու համատեքստը, հարցերի հիմնավորումը, հնարավոր պատժամիջոցները, արդյունքների մասին տեղեկատվություն),
- Ավտոմատ հետադարձ կապ ռեսպոնդենտների հետ (օրինակ, բիզնեսներ) արդյունքում ստացված վիճակագրության մասին տեղեկատվության տեսքով:

Ցուցանիշ 2.4. Հասանելիությունը այլ տվյալներին վիճակագրական նպատակներով, ինչպիսիք են մասնավոր տվյալները, դյուրացվում է և ապահովում վիճակագրական գաղտնիություն ու տվյալների պաշտպանվածությունը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Համաձայնագրեր:** Առկա են համաձայնագրեր այլ տվյալներ տնօրինողների հետ, ինչպիսիք են մասնավոր տնօրինվող տվյալները՝ ապահովելու և հեշտացնելու մուտքը դեպի այս տվյալներ: Այս համաձայնագրերը կարող են սահմանել տվյալների օգտագործման շրջանակը, համագործակցության կայունությունը, տվյալների մուտքի/հաղորդման/տրամադրման հաճախականությունն ու ժամանակացույցը, մուտքի/տրամադրման եղանակը, մեթատվյալների տրամադրումը, տվյալների ճիշտ օգտագործումը, հնարավոր փոխհատուցումը մասնավոր տնօրինվող տվյալների օգտագործման համար, վիճակագրական գաղտնիությունը և տվյալների պաշտպանվածությունը:
2. **Գործընկերություններ:** Առկա են գործընկերություններ վիճակագրական մարմինների և մասնավոր ընկերությունների, հետազոտողների և գիտական շրջանակների, կառավարության, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլոց միջև՝ ըստ անհրաժեշտության, խթանելու համագործակցությունը և հեշտացնելու մուտքը այլ տվյալներին, ինչպիսիք են մասնավոր տնօրինվող տվյալները:
3. **Իրազեկման բարձրացում:** Վիճակագրական մարմիններն անցկացնում են հանդիպումներ և իրազեկման բարձրացման այլ միջոցառումներ տվյալներ տնօրինողների հետ, ինչպիսիք են մասնավոր տնօրինվող տվյալները կառավարման և գործառնական մակարդակով՝ բացատրելու խնդիրներ, ինչպիսիք են պաշտոնական վիճակագրության առաքելությունը,

վիճակագրական մարմնի մանդատը, մասնավոր տնօրինվող տվյալների օգտագործման պատճառները, տվյալների պաշտպանվածու օրենսդրությունը և դրանց իրականացումը մարմինների կողմից:

4. **Ներգրավվածություն:** Վիճակագրական մարմնի բարձրագույն ղեկավարությունը խրախուսում է կառավարման մակարդակով իրենց գործընկերների և հիմնական շահագրգիռ խմբերի ներգրավվածությունը, ինչպիսիք են բիզնես հատվածի ասոցիացիաները, մասնավոր տվյալներ տնօրինողների բարձրագույն ղեկավարության հետ քննարկումներում:
5. **Ուղեցույցներ:** Առկա են վիճակագրական մարմինների համագործակցության ուղեցույցներ այլ տվյալներ տնօրինողների հետ, ինչպիսիք են մասնավոր տնօրինվող տվյալները, և դրանք հասանելի են անձնակազմի համար:
6. **Տվյալների որոնում:** Առկա են ընթացակարգեր և ռեսուրսներ՝ սահմանելու տվյալների հնարավոր նոր աղբյուրները:
7. **Մուտքի ընթացակարգեր:** Առկա են ընթացակարգեր մուտք գործելու այլ տվյալներին, ինչպիսիք են մասնավոր տնօրինվող տվյալները: Դրանք հաշվի են առնում մասնավոր տվյալներ տնօրինողների սահմանափակումները և խուսափումը միջամտելու նրանց բիզնես հասկացություններին:
8. **Անվճար մուտք:** Առկա են ուղեցույցներ ինչպես անվճար խթանել և խրախուսել մուտքը այլ տվյալներին, ինչպիսիք են մասնավոր տնօրինվող տվյալները:
9. **Մուտքի համար փոխհատուցում:** Գործընթացն առկա է օժանդակելու հիմնավորված որոշումների ընդունմանը հնարավոր ֆինանսական փոխհատուցումների կամ ոչ գումարային փոխհատուցման մասին, ինչպիսիք են մեթոդաբանական համագործակցությունը և վերապատրաստումը՝ ստանալու մուտքի իրավունքներ այլ տվյալներին, ինչպիսիք են մասնավոր տնօրինվող տվյալները:
10. **Տվյալների պաշտպանվածության ընթացակարգեր:** Առկա են վիճակագրական գաղտնիության ու տվյալների պաշտպանվածության ընթացակարգեր, որոնք վերաբերում են այլ տվյալներին, ինչպիսիք են մասնավոր տնօրինվող տվյալները:
11. **Մուտքի կառավարում:** Մուտքը տվյալների նոր աղբյուրներին ենթակա է կենտրոնական կառավարման վիճակագրական մարմիններում: Այն կարող է

ունենալ փաստացի մարմնի կամ կենտրոնական գործառույթի ձև վիճակագրական մարմնի մակարդակով:

12. **Տեխնիկական ներուժ:** Վիճակագրական մարմիններն ունեն տեխնիկական ներուժ տվյալներին մուտք գործելու համար: Առկա են բոլոր անհրաժեշտ տեխնիկական երաշխիքները՝ երաշխավորելու անվտանգ մուտքը տվյալներին և տվյալների պահպանությունը:

Սկզբունք 3. Ռեսուրսների համապատասխանություն

Վիճակագրական մարմիններում առկա ռեսուրսները բավարար են եվրոպական վիճակագրության պահանջները բավարարելու համար:

Ցուցանիշ 3.1. Վիճակագրական պահանջները բավարարելու համար առկա են համապատասխան քանակական ու որակական առումով մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ռազմավարական պլանավորում:** Առկա է ռազմավարական պլանավորման գործընթաց և հաշվի է առնում մարդկային, ֆինանսական և տեղեկատվական տեխնոլոգիաների ռեսուրսների պահանջները:
2. **Մարդկային ռեսուրսների քաղաքականություն:** Վիճակագրական մարմիններն ունեն մարդկային ռեսուրսների քաղաքականություն՝ ապահովելու բավարար և շատ հմուտ անձնակազմի առկայությունը: Այս քաղաքականությունը ներառում է ընթացակարգեր՝ հավաքագրելու համապատասխան որակավորումներով անձնակազմ, բաշխելու/տեղափոխելու ռեսուրսները և վերապատրաստման, աշխատակիցների կառավարման, կարիերայի զարգացման և անձնակազմի մոտիվացիայի վերաբերյալ դրույթներ:
3. **Ֆինանսական քաղաքականություն:** Վիճակագրական մարմիններն ունեն ֆինանսական քաղաքականություն՝ ապահովելու ֆինանսական ռեսուրսների համապատասխան կառավարումն ու մշտադիտարկումը: Այս քաղաքականությունը ներառում է բյուջետային ընթացակարգեր, որոնք ընդգրկում են բյուջեի հատկացումն ու մշտադիտարկումը, գործող անձանց

դերերի և պարտականությունների բացատրությունը, բյուջետային հաշվետվողականության և աութոփինգի համար ուղեցույցները:

4. **Տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականություն:** Վիճակագրական մարմիններն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների /SS/ քաղաքականություն՝ ապահովելու SS ռեսուրսների համապատասխան կառավարումը: Այս քաղաքականությունը ներառում է համակարգչային համակարգերի, ցանցերի և տեղեկատվական ռեսուրսների առկայությունը, օգտագործումն ու անվտանգությունը: SS քաղաքականությունն ու կառուցվածքը կանոնավոր կերպով վերանայվում են ու արդիականացվում, երբ անհրաժեշտ է:
5. **Կառավարման մարմինների ներգրավվածություն:** Վիճակագրական մարմինները կանոնավոր կերպով քննարկում են ռեսուրսների հարցերը համապատասխան կառավարման մարմինների հետ:
6. **Ռեսուրսների հատկացման ճկունություն:** Եթե հնարավոր է տվյալ վարչական կարգավորմամբ, առկա են ընթացակարգեր՝ օժանդակելու որոշումների կայացմանը մարդկային, ֆինանսական և SS ռեսուրսների ճկուն հատկացման վերաբերյալ՝ արձագանքելու փոփոխվող կարիքներին և առաջնահերթություններին:
7. **Ռեսուրսների օգտագործման մշտադիտարկում:** Առկա են ընթացակարգեր կանոնավոր կերպով մշտադիտարկելու մարդկային, ֆինանսական և SS ռեսուրսների օգտագործումը (համապատասխան գնահատման ընթացակարգերի հիման վրա) և զեկուցելու բարձր ղեկավարությանը:
8. **Ռեսուրսների համապատասխանության գնահատում:** Առկա են ընթացակարգեր կանոնավոր կերպով գնահատելու մարդկային, ֆինանսական և SS ռեսուրսների համապատասխանությունը:
9. **Ռիսկերի կառավարում:** Առկա են ընթացակարգեր կանոնավոր կերպով գնահատելու և մեղմելու ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը:
10. **Աշխատանքի նկարագրություն:** Առկա են ընթացակարգեր՝ ապահովելու, որ առաջադրանքներն ու անհրաժեշտ որակավորումները սահմանող աշխատանքի նկարագրությունները մատչելի լինեն բոլոր պաշտոնների համար և տեղեկացվեն անձնակազմին:

11. **Վերապատրաստման տրամադրում:** Առկա են ընթացակարգեր պլանավորելու և տրամադրելու համապատասխան վերապատրաստում ողջ անձնակազմին՝ ապահովելու համապատասխան հմտություններն ու ունակությունները, ինչպես նաև կանոնավոր կերպով գնահատելու վերապատրաստման համապատասխանությունն ու արդյունավետությունը:

Ցուցանիշ 3.2. Վիճակագրության շրջանակը, մանրամասնեցվածությունը և ծախսը համապատասխանում են կարիքներին:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վիճակագրության արժեքի և մանրամասների, շրջանակի կարգավորման քաղաքականությունը կարիքների նկատմամբ:** Առկա է քաղաքականություն, որը սահմանում է պատճառահետևանքային հարաբերությունները և գնահատում է, թե որքանով են բավարարվում վիճակագրական կարիքները վիճակագրական աշխատանքային ծրագրերում:
2. **Համագործակցություն շահառուների հետ:** Առկա է համագործակցություն շահառուների հետ՝ քննարկելու վիճակագրության շրջանակը, դրա արժեքներն ու օգուտները:
3. **Պլանավորման ընթացակարգեր:** Առկա են ընթացակարգեր՝ վերլուծելու, սահմանելու և գնահատելու վիճակագրության շրջանակն ու մանրամասները՝ հաշվի առնելով ծախսերը, հնարավորությունն ու կարիքները:
4. **Արժեքի իրազեկում:** Անձնակազմն իրազեկվում է պաշտոնական վիճակագրության արժեքի մասին, որը վերաբերում է արտադրանքի բովանդակությանն ու որակին և հնարավոր փոխզիջումներին:
5. **Վիճակագրության շրջանակը, մանրամասնեցվածությունն ու արժեքները:** Վիճակագրության շրջանակը, մանրամասնություններն ու արժեքները սահմանվում են վիճակագրական աշխատանքների ծրագրերում և/կամ այլ փաստաթղթերում:
6. **Օգտագործողների կարիքների և կարծիքի մշտադիտարկում:** Օգտագործողների կարիքներն ու կարծիքը մշտադիտարկվում և հաշվի են առնվում վիճակագրության պլանավորման գործընթացում՝ հնարավորության սահմաններում:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

7. **Ծախսերի հաշվարկ:** Համակարգային գործընթացների և արդյունքի վրա հիմնված ծախսերի հաշվարկն օժանդակում է կառավարման ծախսերի հաշվետվողականությանն ու ծախս-օգուտ վերլուծությանը:

Ցուցանիշ 3.3. Գոյություն ունեն ընթացակարգեր գնահատելու և բավարարելու պահանջները նոր վիճակագրության համար՝ ելնելով դրանց ծախսերից:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Նոր պահանջների գնահատումը ծախսերի նկատմամբ:** Վիճակագրական մարմիններն ունեն ընթացակարգեր՝ ապահովելու, որ նոր վիճակագրության համար պահանջները ճշգրտորեն սահմանված և վերլուծված են, ներառյալ ծախսերի գնահատումը:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

2. **Առաջնահերթությունների սահմանում:** Առկա է գործընթաց՝ սահմանելու առաջնահերթությունները նոր պահանջների շրջանում՝ օգտագործողների կարիքների հիման վրա:
3. **Վիճակագրական թողարկման արժեքի հաշվարկում:** Առկա է ընթացակարգ՝ ապահովելու, որ բոլոր ոլորտների համար նոր վիճակագրական արդյուքները հաշվարկվում են վիճակագրական աշխատանքային ծրագրում:

Ցուցանիշ 3.4. Գոյություն ունեն ընթացակարգեր՝ գնահատելու շարունակական կարիքը ողջ վիճակագրության համար՝ տեսնելու արդյոք որևէ մեկը կարող է կարճվել կամ կրճատվել ռեսուրսներ ազատելու համար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վերանայման ընթացակարգեր:** Առկա են բոլոր վիճակագրության համար վերանայման կանոնավոր ընթացակարգեր՝ օժանդակելու վիճակագրությանն առնչվող որոշումների կայացմանը, որը կարող է դադարեցվել կամ կրճատվել՝ ռեսուրսներ ազատելու նպատակով:

2. **Օգտագործողների խորհրդատվություններ:** Առկա են օգտագործողների խորհրդատվություններ՝ քննարկելու և համաձայնվելու կանոնավոր վերանայման ընթացակարգի արդյունքների վերաբերյալ:
3. **Պլանավորման և առաջնահերթությունների սահմանման գործընթաց:** Առկա են ընթացակարգեր վիճակագրության դադարեցումը կամ կրճատումը պլանավորելու և իրականացնելու համար:

Սկզբունք 4. Որակի հանձնառություն

Վիճակագրական մարմինները պարտավորություն են կրում որակի համար: Նրանք սխստեմատիկաբար և պարբերաբար բացահայտում են ուժեղ և թույլ կողմերը շարունակաբար կատարելագործելու գործընթացի և արտադրանքի որակը:

Ցուցանիշ 4.1. Որակի քաղաքականությունը սահմանվում է և մատչելի է հանրության համար: Կազմակերպական կառուցվածքը և գործիքներն առկա են զբաղվելու որակի կառավարմամբ:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Որակի քաղաքականություն/ հանձնառության հայտարարություն:** Որակի քաղաքականությունը/ հանձնառության հայտարարությունը սահմանում է վիճակագրությունում որակի հետ կապված սկզբունքները, փորձերը և պարտավորությունները, որոնք համահունչ են Եվրոպական վիճակագրական համակարգի առաքելության և տեսլականի հայտարարություններում սահմանված նպատակների հետ: Քաղաքականությունը/հայտարարությունը հանրորեն հասանելի է:
2. **Որակը կառավարելու կազմակերպական կառուցվածք:** Վիճակագրական մարմնի շրջանակում կա մի պարզ կազմակերպական կառուցվածք որակը կառավարելու համար: Նման կառուցվածքի օրինակներն են՝
 - Որակի հանձնաժողով;
 - Որակի կառավարիչ;
 - Որակի կենտրոնացված ստորաբաժանում;
 - Այլ կառուցվածքներ (օրինակ՝ աշխատակիցների ընտրված խումբ, որոնք վերապատրաստված են որպես որակի ուսուցիչներ):

3. **Որակի ուղեցույցներ:** Սահմանված են ուղեցույցներ, թե ինչպես պետք է իրականացնել որակի կառավարումը վիճակագրական արտադրության գործընթացում, ընդգրկելով՝
- Վիճակագրական արտադրության գործընթացի տարբեր փուլերի նկարագրությունը և հղումները դեպի համապատասխան տեղեկատվական փաստաթղթավորում յուրաքանչյուր փուլի համար, հետևելով Ընդհանուր Վիճակագրական Բիզնես Գործընթացների Մոդելին (GSBPM) կամ գործընթացի ցանկացած այլ համարժեք ներկայացմանը;
 - Մեթոդների նկարագրություն՝ դիտարկելու վիճակագրական արտադրության գործընթացի յուրաքանչյուր փուլի որակը:
4. **Որակի ուղեցույցների առկայություն:** Որակի ուղեցույցները, ինչպես սահմանված է վերևում, հասանելի են բոլոր օգտագործողներին՝ առնվազն ամփոփ տարբերակով:
5. **Փաստաթղթավորման ենթակառուցվածք:** Առկա է համապատասխան ենթակառուցվածք, որպեսզի ապահովվի որակի վերաբերյալ արդիականացված փաստաթղթավորումը:
6. **Որակի մշակույթ:** Կազմակերպությունում տարածվում է որակի մշակույթ՝ որակի քաղաքականության իրականացմանը նպաստող կանոնավոր վերապատրաստման ծրագրեր, աշխատանքի վերաբերյալ դասընթացների, կանոնավոր ուսումնական դասընթացների, աշխատանքային հանդիպումների և այլ նախաձեռնությունների միջոցով:
7. **Ռիսկերի կառավարում:** Ռիսկերի կառավարումն իրականացվում է կազմակերպությունում և կիրառվում է տարբեր մակարդակներով, օրինակ.
- Ռազմավարական մակարդակ, այսինքն ռազմավարական արժեքներին և նպատակներին չհետևելու ռիսկերը.
 - Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի մակարդակ, այսինքն Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքին ամբողջությամբ կամ որոշ սկզբունքներին չհամապատասխանելու ռիսկերը
 - Գործընթացի, արտադրանքի և ծրագրի մակարդակ
8. **Ռիսկի և որակի կառավարում:** Ռիսկերը և որակի կառավարումը սերտորեն համակարգված են:

9. Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի առկայություն:
Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքը ակնհայտորեն ներկայացված է կայքերում:

10. Հղումներ Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքին:
Անհրաժեշտության դեպքում, Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքը հիշատակվում է մամուլի հաղորդագրություններում, որոնք վերաբերում են տարածված վիճակագրությանը:

Ցուցանիշ 4.2. Առկա են ընթացակարգեր վիճակագրական արտադրության գործընթացի որակի պլանավորման և մշտադիտարկման համար, ներառյալ տվյալների բազմակի աղբյուրներից տվյալների ինտեգրումը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Մեթոդաբանական և տեխնիկական աջակցության և ընդհանուր գործիքներ:**
Մեթոդաբանական և տեխնիկական աջակցության և ընդհանուր գործիքներ են տրամադրվում մասնագիտացված /համապատասխան ստորաբաժանումներին գործընթացի որակի մշտադիտարկումն/որակի ապահովումն ու բարելավման պլանները իրականացնելու նպատակով:
- 2. Շարունակական կատարելագործման մշակույթ:** Շարունակական բարելավման մշակույթը խթանվում և իրականացվում է ներառելով՝
 - Անձնակազմի իրազեկվածության բարձրացում վիճակագրական գործընթացների որակի բարելավման կարևորության և անհրաժեշտության վերաբերյալ՝ դասընթացների, սեմինարների, հաղորդակցման և այլ միջոցներով;
 - Մեթոդաբանության և բարելավման գործողությունների տանող գործընթացների համակարգված վերանայում և փաստաթղթավորում;
 - Լավագույն վիճակագրական փորձառությունների համակարգային նույնականացում և փոխանակում.
 - Վիճակագրական գործընթացների որակի սիստեմատիկ մշտադիտարկում, գնահատում և բարելավում, ներառյալ տվյալների բազմակի աղբյուրներից տվյալների ինտեգրումը:
- 3. Գործընթացի որակի գնահատում:** Գործընթացները, ինչպիսիք են որակի աուդիտները, որակի վերանայումները կամ որակի գնահատումները առկա են վիճակագրական արտադրության գործընթացի տարբեր փուլերի որակը գնահատելու համար՝ որակի ապահովման և բարելավման պլանի համաձայն:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. Որակի ապահովում և բարելավման ծրագիր: Որակի ապահովման և բարելավման ծրագիրը կամ որևէ այլ համանման սխեմա առկա է: Այն նկարագրում է աշխատանքային ստանդարտները, պաշտոնական պարտականությունները (ինչպիսիք են՝ օրենքները և ներքին կանոնները) և որակի վերահսկման մի շարք գործողություններ՝ կանխելու և մշտադիտարկելու սխալները, գնահատելու որակի ցուցանիշները, վերահսկելու, ինչպես նաև բարելավելու վիճակագրական արտադրության գործընթացի յուրաքանչյուր փուլի որակը, ներառյալ բազմակի տվյալների աղբյուրներից տվյալների ինտեգրումը: Որակի ապահովման և բարելավման ծրագիրը հիմնված է որակի ուղեցույցների վրա կամ երկու փաստաթղթերն էլ փոխադարձ համաձայնեցված են (կախված ազգային հանգամանքներից):

Որակի ապահովման և բարելավման ծրագիրը կամ որևէ այլ համանման սխեմա.

Որակի ապահովման պլան կամ որևէ այլ համանման սխեմա.

- հաշվի է առնում օգտագործողների պահանջները և ստուգում է վիճակագրական գործընթացի համապատասխանությունը;
- ապահովում է վիճակագրական արտադրության գործընթացի տեխնիկական և կազմակերպչական արդյունավետ կառուցվածքը;
- ապահովում է տվյալների հավաքման որակը, այդ թվում վարչական տվյալների և տվյալների այլ աղբյուրների օգտագործումը;
- ապահովում է տվյալների բազմազան աղբյուրներից տվյալների ինտեգրման որակը;
- ապահովում է տվյալների մշակման որակը (կողմնորոշում, խմբագրում, իմպուտացիա և գնահատում);
- ապահովում է որակի շրջանակում հնարավոր փոխզիջումների սիստեմատիկ ուսումնասիրությունը;
- վստահեցնում է, որ վերը նկարագրված տեղեկատվությունը հասանելի և հասկանալի է օգտագործողների համար և ներառված է որակի հաշվետվություններում;
- վստահեցնում է, որ օգտագործողների արձագանքները / հետադարձ կապը կանոնավոր կերպով հավաքվում և գնահատվում են;

- հավաստիացնում է, որ համապատասխան մեթատվյալները տրամադրվում են օգտագործողին նրանց որակի ընկալմանն աջակցելու նպատակով;
 - ներառում է որակի ապահովման և բարելավման հետագա գործողություններ վիճակագրական գործընթացի տարբեր փուլերի համար:
- 5. Գործընթացի որակի բարելավում:** Որակի գնահատման արդյունքները օգտագործվում են գործընթացի մակարդակով՝ բարելավելու համար գործընթացները և արտադրանքների որակը: Պարբերաբար իրականացվում են բարելավման գործողությունների իրականացման մշտադիտարկում: Բարձրագույն ղեկավարությանը տեղեկացվում է առաջընթացի մասին՝ հետագա գործողությունները որոշելու համար:

Ցուցանիշ 4.3. Արտադրանքի որակը պարբերաբար մշտադիտարկվում է և գնահատվում կապված հնարավոր փոխզիջումների հետ և հաղորդվում համաձայն Եվրոպական վիճակագրության որակի չափանիշների:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Արտադրանքի որակի մշտադիտարկում:** Որակի հաշվետվողականության վրա հիմնված ընթացակարգերն առկա են արտադրանքի ներքին մշտադիտարկման համար: Արդյունքները պարբերաբար վերլուծվում և գնահատվում են հնարավոր փոխզիջումներ մասով: Ղեկավարությունը տեղեկացվում է բարելավման գործողությունների վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով:
- 2. Արտադրանքի որակի գնահատում:** Առկա են ընթացակարգեր գնահատելու արտադրանքի որակը Եվրոպական վիճակագրության որակի չափանիշների համեմատ: Գնահատումը միտված է որակի բարելավմանը:
- 3. Օգտագործողների բավարարվածության հետազոտություններ:** Օգտագործողների բավարարվածության հետազոտությունները կամ օգտագործողի կարիքները մշտադիտարկող այլ մեթոդներն իրականացվում են կանոնավոր կերպով: Դրանց հիմնական արդյունքները հրապարակայնորեն մատչելի և ներառված են, անհրաժեշտության դեպքում, որակի հաշվետվություններում:

Գործընթացի/ արտադրանքի մեթոդներ

4. Օգտագործողին ուղղված որակի հաշվետվություններ: Օգտագործողին ուղղված որակի հաշվետվությունները կանոնավոր ատաղրվում են և հանրայնացվում համաձայն Եվրոպական վիճակագրական համակարգի տեղեկատվական մեթատվյալների և որակի ցուցանիշների ստանդարտները, մասնավորապես Միասնական Ինտեգրված Մեթատվյալների Կառուցվածքը (SIMS):

5. Արտադրողին ուղղված որակի հաշվետվություններ: Արտադրողներին ուղղված որակի հաշվետվությունները կանոնավոր կերպով արտադրվում են և տարածվում համապատասխանաբար (Պարբերականությունը պետք է որոշվի. օրինակ՝ կոնկրետ կանոնակարգով և հետազոտության ժամկետով), համաձայն Եվրոպական վիճակագրական համակարգի տեղեկատվական մեթատվյալների և որակի ցուցանիշների ստանդարտները, մասնավորապես Միասնական Ինտեգրված Մեթատվյալների Կառուցվածքը (SIMS): Դրանք ժամանակի ընթացքում օգտագործվում են որակի կանոնավոր մշտադիտարկման համար:

Ցուցանիշ 4.4. Իրականացվում է հիմնական վիճակագրական արտադրանքների կանոնավոր և մանրակրկիտ վերանայում, օգտագործելով արտաքին փորձագետների, որտեղ հնարավոր է:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Որակի վերանայումներ իրականացնելու պլան:** Որակի կանոնավոր վերանայումների ծրագիրը (ինքնագնահատումների, օժանդակ ինքնագնահատումների, որակի գնահատումների, փորձագիտական գնահատումների կամ որակի աուդիտների միջոցով) սահմանվում և իրականացվում է:
- 2. Որակի վերանայումների մեթոդաբանություն:** Որակի վերանայումների մեթոդաբանությունը առկա է և կիրառվում է: Այն վերանայվում է ըստ կարիքների:
- 3. Որակի վերանայումների կազմակերպական կառուցվածք:** Որակի վերանայումների իրականացման համար առկա է համապատասխան կազմակերպական կառուցվածք:
- 4. Ներքին աուդիտորների վերապատրաստում:** Որակի ներքին գնահատողները/աուդիտորները վերապատրաստվում են վիճակագրական մշակման, որակի, աուդիտորական տեխնիկաների և գործելակերպի վերաբերյալ:
- 5. Տեղեկատվական փաստաթղթավորում:** Որակի գնահատումների օգտագործումը որպես տեղեկատվական փաստաթղթավորում

- Որակի քաղաքականություն;
- Որակի ուղեցույցներ / որակի ապահովման պլան կամ նմանատիպ սխեմա;
- Արտադրողին ուղղված որակի հաշվետվություններ և/կամ օգտագործողին ուղղված որակի հաշվետվություններ;
- Արտադրողների կողմից լրացված ինքնագնահատման հարցաթերթեր;
- Վերանայումների/գնահատումների/աուդիտի հարցազրույցների հաշվետվություններ;
- Ռեսպոնդենտների և / կամ օգտագործողների կողմից լրացված հարցաթերթեր;
- Օգտագործողների ցանկացած այլ բավարարվածության ուսումնասիրություն:

6. Գործողությունների պլաններ: Որակի վերանայումների եզրահանգումները քննարկվում են ղեկավարության հետ և հանգեցնում են գործողությունների պլանների:

7. Օգտագործողների հետ հետադարձ կապը: Տարբեր օգտագործողների հետ հետադարձ կապը օգտագործվում է որպես գործողությունների պլաններում ներդրում (օգտագործելով օգտագործողների բավարարվածության հետազոտությունները կամ ֆոկուս խմբերը):

8. Արտաքին մասնագետների ներգրավում: Արտաքին փորձագետները ներգրավվում են առանցքային վիճակագրական ոլորտները վերանայելու համար:

9. Համեմատական վերլուծություն: Իրականացվում է հիմնական վիճակագրական գործընթացների համեմատական վերլուծություն այլ վիճակագրական մարմինների հետ՝ լավագույն փորձերը բացահայտելու նպատակով:

Մկզբունք 5. Վիճակագրական գաղտնիություն

Բացարձակապես երաշխավորված է տվյալներ տրամադրողների մենությունը և իրենց կողմից տրամադրած տեղեկատվության գաղտնիությունն ու դրա միայն վիճակագրական նպատակներով օգտագործումը:

Ցուցանիշ 5.1. Վիճակագրական գաղտնիությունն երաշխավորված է օրենքով:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Իրավական դրույթներ:** Հստակ դրույթներն ամրագրված են օրենքում և/կամ այլ համապատասխան օրենսդրության մեջ (Եվրոպական կամ ազգային մակարդակով) և երաշխավորում են վիճակագրական գաղտնիությունը և տվյալների պաշտպանվածությունը:

Ցուցանիշ 5.2. Անձնակազմը ստորագրում է պաշտոնում նշանակվելու իրավական գաղտնիության պարտավորություններ:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1.Գաղտնիության պարտադիր պարտավորություններ: Վիճակագրական գաղտնիության պահպանման պարտավորությունները գոյություն ունեն վիճակագրական մարմիններում և ստորագրվում են ամբողջ անձնակազմի կողմից տեղում կամ աշխատանքի նշանակվելիս, ինչպես նաև այն արտաքին կողմերի կողմից, ովքեր վիճակագրական մարմնի անունից աշխատանք են ձեռնարկում: Փոփոխության դեպքում, նման համաձայնագրերը պետք է արդիականացվեն և կրկին ստորագրվեն ամբողջ անձնակազմի կամ շահագրգիռ կողմերի կողմից:

Ցուցանիշ 5.3. Տույժեր են նախատեսված վիճակագրական գաղտնիության ցանկացած ղիտավորյալ խախտումների համար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Իրավական դրույթներ:** Վիճակագրական օրենքում և/կամ այլ համապատասխան օրենսդրության մեջ (Եվրոպական կամ ազգային մակարդակով) առկա են ազգային դրույթներ վիճակագրական գաղտնիությունը և տվյալների պաշտպանվածությունը խախտելու համար վարչական, տուգանային և կարգապահական պատժամիջոցների վերաբերյալ:
- 2. Պատժամիջոցների վերաբերյալ դրույթները հասանելի են հանրությանը:** Վիճակագրական գաղտնիությունը և տվյալների պաշտպանվածությունը խախտելու պատժամիջոցների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն հասանելի է :

Ցուցանիշ 5.4. Ուղեցույցները և հրահանգները տրամադրվում են անձնակազմին վիճակագրական գործընթացների ընթացքում վիճակագրական գաղտնիության պաշտպանության համար: Գաղտնիության քաղաքականությունը հայտնի է դարձված հանրությանը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Վիճակագրական գաղտնիության քաղաքականություն:** Վիճակագրական գաղտնիության քաղաքականությունը հրապարակայնորեն հասանելի է: Այն սահմանում է սկզբունքներ և պարտավորություններ վիճակագրական գաղտնիության հետ կապված, որոնք հիմնավորում են ռեսպոնդենտների, հանրության և շահառուների վստահությունը;
- 2. Վիճակագրական գաղտնիության պահպանության կազմակերպական կառուցվածք:** Վիճակագրական մարմնում կա համապատասխան կազմակերպական կառուցվածք՝ գաղտնիությունը և տվյալների պաշտպանվածությունը ապահովելու համար: Այս կառուցվածքը նպատակ ունի ուղեցույցներ տրամադրել՝ առաջարկելով համապատասխան մեթոդաբանություններ և պարբերաբար վերանայելու մեթոդները, որոնք օգտագործվում են վիճակագրական գործընթացները իրականացնելիս վիճակագրական գաղտնիության և տվյալների պաշտպանության համար:
- 3. Ուղեցույց անձնակազմի համար:** Վիճակագրական մարմինը նախապատրաստում և անձնակազմին է տրամադրում գրավոր հրահանգներ, ուղեցույցներ և վերապատրաստում որպեսզի պահպանվի և ապահովվի վիճակագրական գաղտնիությունը և տվյալների պաշտպանվածությունը վիճակագրական գործընթացներն իրականացնելիս:
- 4. Գաղտնիության ապահովման մեթոդներ:** Գաղտնիության բնագավառում մշտապես իրականացվում է շարունակական ուսումնասիրություն: Օգտագործվող մեթոդները ընտրվում են այնպես, որ օպտիմալ ձևով խոչընդոտեն բացահայտման ռիսկի և տեղեկատվության կորստի միջև փոխզիջմանը՝ վիճակագրական գործընթացներն իրականացնելիս:
- 5. Ռեսպոնդենտների իրազեկվածությունը գաղտնիության պարտավորությունների վերաբերյալ:** Ռեսպոնդենտները, որոնց հետ կապ է հաստատվել տվյալների հավաքման ընթացքում պարբերաբար տեղեկացվում են, որ վիճակագրական մարմինը լիովին պարտավորություն է կրում տվյալների պաշտպանության և վիճակագրական գաղտնիության համար և տվյալները միայն օգտագործվում են վիճակագրական նպատակներով և անհատական տվյալները ոչ մի հանգամանքում չեն բացահայտվում:
- 6. Օգտագործողների իրազեկվածությունը գաղտնիության պարտավորությունների վերաբերյալ:** Օգտագործողները տեղեկացվում են, որ վիճակագրական մարմինը լիովին պարտավորություն է կրում տվյալների պաշտպանության և վիճակագրական գաղտնիության համար և տվյալները

միայն օգտագործվում են վիճակագրական նպատակներով և անհատական տվյալները ոչ մի հանգամանքում չեն բացահայտվում:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

7. **Վիճակագրական բացահայտման վերահսկման մեթոդները:** Առկա են դրույթներ ապահովելու, որ մինչ վիճակագրական տեղեկատվության թողարկումը (ագրեգացված տվյալներ և միկրոտվյալներ), կիրառվում են վիճակագրական բացահայտման վերահսկման մեթոդներ:
8. **Արտադրանքի ստուգում:** Ամեն անգամ, երբ ապահով միջավայրում մուտք է կատարվում հետազոտական նպատակներով միկրոտվյալներ (օրինակ՝ հեռահար մուտք, ապահով կենտրոն, հեռահար աշխատանք), ամբողջ արտադրանքը մինչ թողարկվելը ստուգվում է բացահայտման հետ կապված: Առկա են գործընթացներ կանխելու վիճակագրական գաղտնիության խախտումը:

Ցուցանիշ 5.5. Անհրաժեշտ կարգավորող, վարչական, տեխնիկական և կազմակերպչական միջոցներ են ձեռնարկվում՝ վիճակագրական տվյալների և դրանց անվտանգությունն ու ամբողջականությունը պաշտպանելու համար և դրանք փոխանցելու լավագույն փորձառությունների, միջազգային ստանդարտների, ինչպես նաև Եվրոպական և ազգային օրենսդրության համաձայն:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Տեղեկատվության անվտանգության քաղաքականություն:** Առկա է տեղեկատվության անվտանգության քաղաքականություն վիճակագրական գործընթացներն իրականացնելիս գաղտնի և զգայուն տվյալների պաշտպանության և անվտանգության համար և այն պարբերաբար արդիականացվում է: Քաղաքականությունն ընդգրկում է ողջ բիզնես, տեխնիկական, իրավական և կանոնակարգող միջավայրը, որում գործում է վիճակագրական մարմինը: Այդ քաղաքականությունը լայնորեն հայտնի է վիճակագրական մարմնի անձնակազմին:

2. **Անվտանգության գործընթացներ և միջոցներ:** Տեղեկատվական անվտանգության քաղաքականությանը համաձայն վիճակագրական մարմիններն ունեն ֆիզիկական և տրամաբանական անվտանգության համապատասխան միջոցներ և գործընթացներ՝ ստուգելու, որ տվյալների անվտանգությունն ապահովված է վիճակագրական գործընթացների ընթացքում (ներառյալ

պահեստավորումը, փոխանցումը և տվյալների տարածումը), կանխելու տվյալների արտահոսքը և վիճակագրական գաղտնիության և ամբողջականության խախտումը: Այս միջոցներն ընտրվում են եվրոպական և ազգային օրենսդրության, Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (ՏՊԸԿ), միջազգային ստանդարտների, ինչպես նաև լավագույն փորձառությունների համաձայն: Բոլոր ընթացակարգերը հայտնի են և մատչելի են անձնակազմի համար:

3. Տեղեկատվության անվտանգության աուդիտներ: Իրականացվում են վիճակագրական մարմնի տվյալների անվտանգության համակարգի կանոնավոր և սիստեմատիկ անվտանգության աուդիտներ և ներթափանցման փորձարկումներ: Աուդիտը գնահատում է յուրաքանչյուր գործիք և երաշխիք, որոնք պետք է պաշտպանեն վիճակագրական տվյալների անվտանգությունն ու ամբողջականությունը պահպանման, փոխանցման և տարածման ընթացքում:

4. Տվյալների ապահով պահոց: Բոլոր վիճակագրական տվյալները պահվում են ապահով միջավայրերում, որոնք կանխում են չլիազորված անձանց մուտքը՝ գաղտնիության արձանագրությունների, առկա ստանդարտների և լավագույն փորձառությունների համաձայն:

5. Տվյալների մուտքի մշտադիտարկում: Տվյալների պահեստների և փոխանցման ալիքների ողջ մուտքը խիստ մշտադիտարկվում և գրանցվում է: Մուտքի իրավունքները գրանցվում և արդիական են պահվում՝ չլիազորված մուտքը կանխելու համար:

6. Նույնակցուցիչների մշակում: Անունները և հասցեները կամ այլ նույնացուցիչները ջնջվում են տվյալների ֆայլերից, որքան հնարավոր է շուտ:

7. Տեղեկատվական ռիսկերի գնահատում: Կազմվում է տեղեկատվական ռիսկերի գնահատման կարգ: ՏՏ համակարգի անվտանգությունը պարբերաբար գնահատվում է և սահմանվում, իրականացվում և հետևվում են համապատասխան բարելավման գործողությունները:

8. Տեղեկատվական անվտանգության պատասխանատու: Յուրաքանչյուր վիճակագրական մարմին նշանակում է տեղեկատվական անվտանգության պատասխանատու կազմակերպության տեղեկատվական համակարգերի անվտանգությունը կառավարելու նպատակով: Տեղեկատվական անվտանգության պատասխանատուն՝

- համագործակցում է տեղեկատվություն տնօրինողների հետ անվտանգության հետ կապված համակարգերի կատեգորիաների բաշխման հարցում;
- նպաստում է տեղեկատվական անվտանգության շարունակական բարելավմանը;

- իրականացնում է ռիսկերի վերլուծություն և սահմանում է յուրաքանչյուր համակարգի նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցները;
 - վերահսկում է անվտանգության միջոցառումների իրականացումը;
 - խթանում է անվտանգության հարցերում վերապատրաստումը, իրազեկումը և հաղորդակցումը;
 - համակարգում է անվտանգության հետ կապված հարցումները և այլն:
- 9. Տվյալների պաշտպանության ազդեցության գնահատում:** Համաձայն տվյալների պաշտպանության օրենսդրության՝ տվյալների պաշտպանության ազդեցության գնահատումը սահմանվում է մշակման որոշ տեսակների համար՝ գնահատելու դրա կարիքը և համամասնությունը և օգնելու կառավարել անհատների իրավունքների և ազատությունների ռիսկերը:

Ցուցանիշ 5.6. Խիստ արձանագրություններ են կիրառվում արտաքին օգտագործողների հանդեպ հետազոտական նպատակներով վիճակագրական միկրո տվյալներին մուտք գործելու համար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Գիտական նպատակներով միկրոտվյալներ մուտքի պայմանները:** Գիտական նպատակներով միկրոտվյալներ հետազոտողի մուտքի տրամադրման հստակ պայմանները սահմանված են վիճակագրական օրենքում և/ կամ համապատասխան այլ օրենսդրությունում/ եվրոպական կամ ազգային մակարդակով/: Այդ պայմանները հրապարակայնորեն հասանելի են :
- 2. Գաղտնիության հռչակագիր:** Վիճակագրական մարմինները արտաքին օգտագործողներին (հետազոտական ինստիտուտներ և հետազոտողներ) պարտավորեցնում են գաղտնիության մասին հռչակագիր ստորագրել:
- 3. Գիտական նպատակներով գաղտնի տվյալներ հետազոտողի մուտքի երաշխիքները:** Վիճակագրական մարմինը ապահովում է, որ բոլոր իրավական, տեխնիկական և տրամաբանական երաշխիքները առկա լինեն գաղտնի տեղեկատվությունը պաշտպանելու և տվյալների պաշտպանվածությունը ապահովելու նպատակով: Օգտագործողները պարտավորվում են ստորագրել համաձայնագիր՝ միկրոտվյալների մուտքի և օգտագործման վերաբերյալ:
- 4. Միկրոտվյալների վերահսկում:** Վիճակագրական մարմիններն ունեն համապատասխան միջոցներ՝ ապահովելու ստորագրված պայմանագրերի հավատարմությունը և միկրոտվյալների ապօրինի օգտագործումը կանխելու համար:

5. **Ապահով միջավայր:** Ստեղծվում է անվտանգ միջավայր (օրինակ՝ հեռավոր մուտք կամ անվտանգ կենտրոն), որտեղ թույլատրվում է մուտք միկրոտվյալներ:

Գործընթացի/ արտադրանքի մեթոդ

6. **Միկրոտվյալների օգտագործման մշտադիտարկում:** Միկրոտվյալների արտաքին օգտագործումը պարբերաբար մշտադիտարկվում է բացահայտելու որևէ հանգամանք, որի դեպքում տվյալների գաղտնիությունը կարող է խախտվել կամ տվյալների պաշտպանվածությունը վտանգվել: Գործում են ընթացակարգեր անհապաղ ուղղիչ գործողություն ասպահովելու համար:

Սկզբունք 6. Անկողմնակալություն և օբյեկտիվություն

Վիճակագրական մարմինները մշակում, արտադրում և տարածում են Եվրոպական վիճակագրությունը հարգելով գիտական անկախությունը և օբյեկտիվ, պրոֆեսիոնալ և թափանցիկ ձևով, հավասարապես վերաբերվելով բոլոր օգտագործողներին:

Ցուցանիշ 6.1. Վիճակագրությունը կազմվում է օբյեկտիվ հիմքի վրա՝ սահմանված վիճակագրական նկատառումներով:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Անկողմնակալության և օբյեկտիվության ուղեցույցներ:** Անկողմնակալությունն ու օբյեկտիվությունն ասպահովելու ուղեցույցներն առկա են վիճակագրական մարմնում և հայտնի են վիճակագրական անձնակազմին: Ուղեցույցների իրականացումը մշտադիտարկվում է:
2. **Արտաքին գործընկերների ընտրության օբյեկտիվություն:** Վիճակագրական հետազոտություններ/վիճակագրական մարմնի աշխատանքներ իրականացնելու նպատակով արտաքին գործընկերների (օրինակ՝ ընկերություններ, հաստատություններ, այլ մարմիններ և տվյալների տրամադրողներ) ընտրության չափանիշներն օբյեկտիվ և հանրայնացված են:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

3. **Մեթոդաբանական օբյեկտիվություն և լավագույն փորձեր:** Աղբյուրները, հասկացությունները, մեթոդները, գործընթացները և տվյալների տարածման

ձևերը ընտրվում են վիճակագրական նկատառումների և ազգային և միջազգային սկզբունքների ու լավագույն փորձերի հիման վրա:

Ցուցանիշ 6.2. Աղբյուրների և վիճակագրական մեթոդների ընտրությունները, ինչպես նաև վիճակագրության տարածման մասին որոշումները տեղեկացվում են վիճակագրական նկատառումներով:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Տվյալների աղբյուրների ընտրության ընթացակարգեր:** Վիճակագրական տեղեկատվության տվյալների աղբյուրների ընտրության ընթացակարգերը առկա են և հանրայնացված:
2. **Տվյալների աղբյուրների և մեթոդաբանության ընտրության չափանիշներ:** Տվյալների աղբյուրների և վիճակագրական մեթոդների ընտրությունները հիմնված են ընդհանուր համաձայնեցված մեթոդաբանության և լավագույն փորձառությունների վրա:
3. **Տվյալների աղբյուրների և մեթոդաբանության վերաբերյալ տեղեկատվություն:** Ընտրված տվյալների աղբյուրները և վիճակագրական մեթոդները հստակ նշված են մեթոդաբանական նշումներում, որակի կամ մեթատվյալների հաշվետվություններում:
4. **Տվյալների աղբյուրների և մեթոդաբանության ընտրության գնահատում:** Վիճակագրական մարմինը կանոնավոր գնահատում է ընտրված տվյալների աղբյուրների, հավաքման եղանակների և մեթոդաբանության վիճակագրական հիմնավորվածությունը:
5. **Տարածման վերաբերյալ որոշումներ:** Վիճակագրության տարածման վերաբերյալ որոշումները հիմնված են ընդհանուր համաձայնեցված մեթոդաբանության, մասնագիտական չափանիշների, վիճակագրական գաղտնիության կանոնների և լավագույն փորձառությունների վրա:

Գործընթացի/արտադրանքի մեթոդ

6. **Տվյալների չբացահայտման վիճակագրական նկատառումներ:** Տվյալների չբացահայտումը միայն թույլատրվում է վիճակագրական գաղտնիությունից ելնելով: Որակի հետ կապված հարցերի դեպքում տվյալները կարող են հրատարակվել հստակ սահմանված սահմանափակումներով:
7. **Տվյալների աղբյուրների փոխարինում:** Տվյալների առկա աղբյուրների փոխարինումը նորերով և / կամ տվյալների նոր աղբյուրների ինտեգրումը

վիճակագրական գործընթացներում մանրակրկիտ և օբյեկտիվորեն գնահատվում է որակի և հնարավոր փոխզիջումների առումով:

Ցուցանիշ 6.3. Հրապարակված վիճակագրությունում հայտնաբերված սխալներն ուղղվում են հնարավորինս սեղմ ժամկետներում և հրապարակվում:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Սխալների շտկման քաղաքականություն:** Վիճակագրական մարմինն ունի հստակ քաղաքականություն, թե ինչպես պետք է վարվել սխալների դեպքում, ինչպես արձագանքել, երբ դրանք հայտնաբերվել են և ինչպես դրանք ուղղել: Սխալների հետ վարվելու քաղաքականությունը հանրորեն մատչելի է:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

2. **Սխալի վերաբերյալ հայտնում:** Առկա են հրապարակված վիճակագրությունում հայտնաբերված սխալի մասին հայտարարման գործընթացներ:
3. **Հական սխալների հայտարարություն և ուղղում:** Առկա են գործընթացներ անհապաղ հայտարարելու և տեղեկացնելու օգտագործողներին հրապարակված վիճակագրությունում հայտնաբերված էական սխալների մասին և այն մասին, թե երբ և ինչպես են դրանք ուղղվելու/ուղղվել: Սխալները հնարավորինս շուտ ուղղվում են:

Ցուցանիշ 6.4. Օգտագործվող մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունը հանրորեն մատչելի է:

Գործընթացի/արտադրանքի մեթոդ

1. **Մեթոդաբանական նշումներ և մեթատվյալներ:** Բոլոր վիճակագրական տվյալները ուղեկցվում են համապատասխան մեթատվյալներով և մեթոդական նշումներով, (կենտրոնացած տվյալների աղբյուրների, մեթոդների և ընթացակարգերի վրա), համաձայն վավեր Եվրոպական վիճակագրական համակարգի/ԵՎՀ/ ստանդարտների:
2. **Գործընթացների թափանցիկություն:** Վիճակագրական մարմինը փաստաթղթավորում է իր արտադրական գործընթացները: Այդ գործընթացների փաստաթղթավորումը առկա է անձնակազմի համար: Խտացրած / ամփոփ տարբերակը հասանելի է դարձվում օգտագործողներին ԵՎՀ ստանդարտների,

այսինքն՝ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS) հենքով օգտագործողին ուղղված որակի հաշվետվությունների միջոցով:

Ցուցանիշ 6.5. Վիճակագրական թողարկման ամսաթվերը և ժամերը նախապես հայտարարվում են:

Ինստիտուցիոնալ մակարդակ

1. **Թողարկման օրացույցի առկայություն:** Հանրորեն մատչելի և դյուրինորեն հասանելի թողարկման օրացույցը, որը պարունակում է տեղեկատվություն գալիք թողարկումների ամսաթվի և ժամի վերաբերյալ հրապարակվում է և նախապես հայտնի է դառնում օգտագործողներին:
2. **Թողարկման օրացույցի կայունություն:** Տարածման ժամանակացույցում փոփոխությունները, երբ բացարձակապես անհրաժեշտ են համարվում, նախապես հրապարակայնորեն և անհապաղ հայտարարվում են և պատշաճ կերպով բացատրվում: Սկզբնական նախատեսված ժամանակացույցը մնում է տեսանելի:

Ցուցանիշ 6.6. Նախապես ծանուցում է տրվում հիմնական վերանայումների կամ մեթոդաբանություններում փոփոխությունների վերաբերյալ:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վերանայումների հայտարարություն:** Էական վերանայումները հայտարարվում են վիճակագրական մարմինների կողմից:
2. **Վերանայումների վերաբերյալ տեղեկատվության հաղորդում:** Վիճակագրական մեթոդաբանություններում էական վերանայումների կամ փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը վիճակագրական մարմնի կողմից հաղորդվում է նախապես՝ օգտագործելով տարբեր ուղիներ (օրինակ՝ վերանայումների օրացույցում, վիճակագրական աշխատանքների ծրագրում, կայքում և/կամ սոցիալական լրատվամիջոցներում, կոնկրետ օգտագործողներին ուղարկված նամակում և/կամ օգտագործողների հետ հանդիպման ժամանակ):

Գործընթացի /արտադրանքի մեթոդներ

3. **Վերանայման փորձառություն:** Տեղի են ունենում գործընթացներ՝ օգտագործողներին վերանայման փորձառության վերաբերյալ

տեղեկացնելու նպատակով (վերանայման պատճառները, վերանայման ժամանակացույցը, մեթոդաբանությունը և այլն):

Ցուցանիշ 6.7. Վիճակագրական մարմինները ինքնուրույն են որոշում վիճակագրական թողարկումների ժամկետը և բովանդակություն՝ հետևելով վիճակագրական տեղեկատվության ամբողջական և ժամանակին տրամադրման նպատակին: Բոլոր օգտագործողները պետք է ունենան հավասար մուտք վիճակագրական թողարկումներին միևնույն ժամանակ: Ցանկացած արտոնյալ նախապես թողարկման մուտք ցանկացած արտաքին օգտագործողի համար սահմանափակվում, վերահսկվում և հրապարակվում է: Այն դեպքում, երբ տեղեկատվության արտահոսք է առաջանում, նախապես թողարկման կարգավորումները վերանայվում են, որպեսզի ապահովվի անկողմնակալությունը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. Պաշտոնական դրույթներ: Ուժի մեջ է պաշտոնական դրույթ, որը սահմանում է, որ վիճակագրական մարմինները պետք է անկախորեն մշակեն, արտադրեն և տարածեն վիճակագրությունը օբյեկտիվ, պրոֆեսիոնալ և թափանցիկ ձևով, հավասարապես վերաբերվելով բոլոր օգտագործողներին:

2. Հավասար մուտք: Վիճակագրական մարմնում առկա են բոլոր օգտագործողների հավասար մուտքը վիճակագրություն նախանշված ժամանակներում ապահովելու կանոններ և ընթացակարգեր:

3. Նախնական թողարկման մուտքերը: Նախնական թողարկման մուտք, եթե լինում է, խստորեն վերահսկվում է, մանրամասնորեն փաստաթղթավորվում և լավ հիմնավորվում: Փաստաթղթավորումը հրապարակայնորեն մատչելի է: Ընթացակարգերը թափանցիկ են և ներառում են երաշխիքներ, որոնք կանխում են նախնական թողարկման հնարավոր չարաշահումը:

4. Արտահոսքերը կանխելու և կարգավորելու ընթացակարգեր: Առկա են տեղեկատվության արտահոսքերը կանխելու և առաջացման դեպքում վարվելու գործընթացներ:

5. Էմբարգոյի ներքո տվյալների սխալ գործածության կանխման ընթացակարգերը: Ընթացակարգերն ու միջոցառումները առկա են՝ արձագանքելու էմբարգոյի ներքո տվյալների սխալ յուրաքանչյուր գործածությանը և վերանայելու նախնական թողարկման պայմանավորվածությունները:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

6.Վիճակագրական թողարկումների ժամկետի և բովանդակության վերաբերյալ որոշում: Վիճակագրական մարմինները ինքնուրույն են որոշում վիճակագրական թողարկումների ժամկետը և բովանդակությունը : Թողարկման օրվա վերաբերյալ որոշումը հաշվի է առնում վիճակագրական թողարկման համար տվյալների ամբողջականությունն ու ժամկետայնությունը:

Ցուցանիշ 6.8. Վիճակագրական թողարկումները և մամուլի ասուլիսներում արված հայտարարություններն օբյեկտիվ են և անկուսակցական:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Օբյեկտիվությունը հայտարարություններում:** Վիճակագրական մարմնի կողմից ներկայացրած վիճակագրական թողարկումները և հայտարարությունները բացառապես հիմնված են վիճակագրական եզրահանգումների և արդյունքների վրա:
2. **Ուղեցույցներ մամուլի հաղորդագրությունների համար:** Վիճակագրական մամուլի հաղորդագրությունները կազմվում են հետևելով հստակ և ստանդարտ ուղեցույցների:
3. **Ուղեցույցներ մամուլի ասուլիսների համար:** Առկա է մամուլի ասուլիսների նորմերի և կանոնների վերաբերյալ անձնակազմին հասանելի քաղաքականություն, որը ներառում է օբյեկտիվության և անկուսակցականության վերաբերյալ ուղեցույց:
4. **Մամուլի ասուլիսների անկախ բնույթը:** Մամուլի ասուլիսները տեղի են ունենում անկախ քաղաքական իրադարձություններից և զերծ են քաղաքական հայտարարությունների վերաբերյալ մեկնաբանություններից: Հնարավորության դեպքում, մամուլի ասուլիսները նախապես հայտարարվում են հրապարակայնորեն մասշտաբի օրացույցում/ ժամանակացույցում:

Վիճակագրական գործընթացներ

Եվրոպական և այլ միջազգային ստանդարտները, ուղեցույցները և լավագույն փորձերն ամբողջությամբ պետք է դիտարկվեն վիճակագրական մարմինների կողմից օգտագործվող գործընթացներում՝ պաշտոնական վիճակագրությունը կազմակերպելու, հավաքելու, մշակելու և տարածելու համար: Վիճակագրության հանդեպ վստահությունն ամրապնդվում է լավ կառավարման և արդյունավետության

համար հեղինակությամբ: Համապատասխան սկզբունքներն են՝ հիմնավորված մեթոդաբանությունը, համապատասխան վիճակագրական ընթացակարգերը, ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածությունը և ծախսերի արդյունավետությունը:

Սկզբունք 7. Հիմնավորված մեթոդաբանություն

Հիմնավորված մեթոդաբանությունը վիճակագրության որակի հիմքն է: Այն պահանջում է համապատասխան գործիքներ, ընթացակարգեր և փորձ:

Ցուցանիշ 7.1. Եվրոպական վիճակագրության համար օգտագործվող ընդհանուր մեթոդաբանական շրջանակը հետևում է Եվրոպական և այլ միջազգային ստանդարտներին, ուղեցույցներին և լավագույն փորձերին, անընդհատ ձգտելով նորարարության:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Ամփոփ մեթոդաբանական փաստաթուղթ:** Վիճակագրական գործընթացների իրականացման մեթոդաբանական շրջանակը և ընթացակարգերը ներառված են ամփոփ մեթոդաբանական փաստաթղթում և պարբերաբար վերանայվում են: Մեթոդաբանական փաստաթղթում բացատրվում և մանրամասնեցվում է, թե ինչպես են եվրոպական և այլ միջազգային ստանդարտները կիրառվում:
- 2. Մեթոդաբանական ուղեցույցների, ձեռնարկների առկայություն:** Մեթոդաբանական ուղեցույցները անհրաժեշտության դեպքում հրապարակայնորեն մատչելի են:
- 3. Միջազգային առաջարկություններից շեղման բացատրություն:** Գոյություն ունեցող Եվրոպական և միջազգային մեթոդաբանական առաջարկություններից շեղումը փաստաթղթավորվում է / բացատրվում և հիմնավորվում է/:
- 4. Ձգտելով նորարարությանը:** Վիճակագրական մարմինները ակտիվորեն խրախուսում են նոր և նորարար մեթոդները վիճակագրության համար: Նրանք մշակում են մեթոդաբանական աշխատություն և աջակցում են SS լուծումներին ապահովելու վիճակագրության որակը, մանավանդ, երբ սովյալների հավաքման նոր և այլընտրանքային եղանակները և աղբյուրները օգտագործվում են որպես մուտքագրում:

5. **Տվյալների հավաքման և մշակման նորարարական մեթոդներ:** Վիճակագրական մարմինները նախաձեռնում են և մասնակցում են տվյալների հավաքման և մշակման նորարարական մեթոդների մշակմանը, ներառելով նոր և (կամ) այլընտրանքային տվյալների աղբյուրների և աշխարհատարածական տվյալների ինտեգրումը:
6. **Վիճակագրական ծառայություններ:** Վիճակագրական մարմինները խթանում են վիճակագրական ծառայությունների ընդունումը ընդհանուր վիճակագրական տեղեկատվական ճարտարապետության ներքո:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

7. **Նորարարական մեթոդների ընդունում:** Որակի վրա ազդեցությունը նորարարական մեթոդների ընդունման հետ կապված նախապես գնահատվում է:

Ցուցանիշ 7.2. Ընթացակարգերն առկա են ապահովելու, որ ստանդարտ հասկացությունները, սահմանումները և դասակարգումները հետևողականորեն կիրառվեն վիճակագրական մարմինների կողմից:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Հասկացություններ, սահմանումներ, դասակարգումներ և այլ տեսակի ստանդարտներ:** Հասկացությունները, սահմանումները, դասակարգումները և այլ տեսակի ստանդարտները սահմանվում են վիճակագրական մարմնի կողմից, կիրառվում են Եվրոպական և/կամ ազգային օրենսդրությանը համապատասխան և փաստաթղթավորվում են:
2. **Մեթոդաբանական կազմակերպական կառուցվածք:** Առկա է կազմակերպական կառուցվածք (օրինակ՝ ստորաբաժանում, ցանցեր, կոմիտե), որը պատասխանատու է մեթոդաբանության համար: Նրա աշխատանքները կարող են ներառել վիճակագրական մեթոդների մշակումը, դրանց իրականացման մշտադիտարկումը, արդյունքների հաստատումը և ԸՎԲԳՄ-ի փուլերի համար ստանդարտ գործիքների առկայության ապահովումը:

Գործընթացի / արտադրանքի մեթոդներ

3. Համապատասխան փորձագետների և օգտագործողների տեսակետները: Վիճակագրական գործընթացները անհրաժեշտության դեպքում օգտվում են համապատասխան փորձագետների և օգտագործողների տեսակետներից:

4. Մեթոդաբանական փաստաթղթավորում: Մեթոդաբանական փաստաթղթավորումը մշակվում է յուրաքանչյուր վիճակագրական գործընթացի համար պարունակելով ամբողջ առնչվող տեղեկատվությունը հասկացությունների, մեթոդների, դասակարգումների և այլ տեսակի ստանդարտների վերաբերյալ և հանրայնացնում է առնվազն ամփոփ ձևով հետևելով ԵՎՀ ստանդարտին՝ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքին:

Ցուցանիշ 7.3. Եվրոպական վիճակագրության համար օգտագործված ռեգիստրները և շրջանակները, անհրաժեշտության դեպքում, պարբերաբար գնահատվում և ճշգրտվում են բարձր որակ ապահովելու համար:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

- 1. Ռեգիստրների և շրջանակների արդիականացում:** Եվրոպական վիճակագրության համար օգտագործվող ռեգիստրների և շրջանակների վարողը (վիճակագրական մարմինը կամ ռեգիստրների և շրջանակների համար պատասխանատու վարչական մարմինը) պատասխանատու է համակցության բոլոր համապատասխան փոփոխությունների արդիականացման համար, օրինակ՝ բիզնեսի կամ անհատների համար թարմացնելու համար: Այս արդիականացումները անընդհատ կատարվում են ռեգիստրների համար և իրականացվում են պարբերաբար՝ ըստ անհրաժեշտության շրջանակների համար:
- 2. Ռեգիստրների և շրջանակների որակի գնահատում:** Եվրոպական վիճակագրության համար օգտագործվող ռեգիստրների և շրջանակների որակը կանոնավոր գնահատվում է:
- 3. Հետազոտություններից ստացված արձագանք:** Հետազոտությունների իրականացման ընթացքում հավաքված տեղեկատվությունը օգտագործվում է ռեգիստրների և շրջանակների որակը, հատկապես դրա ընդգրկունությունը գնահատելու, արդիականացնելու և բարելավելու համար:
- 4. Վարչական տվյալների աղբյուրներում փոփոխություններ:** Վիճակագրական մարմինները տեղեկացվում են համապատասխան վարչական աղբյուրներում

փոփոխությունների մասին և օգտագործում են այս տեղեկատվությունը՝ ռեզիստորների և շրջանակների համար հետևանքները ուսումնասիրելու նպատակով:

5. **Մասնավոր պահվող տվյալների արդիականացում:** Մասնավոր տվյալների համար պատասխանատու տվյալներ տրամադրողը պետք է տեղեկացնի վիճակագրական մարմինն բովանդակության կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին, երբ դա ազդեցություն կունենա չմշակված տվյալների որակի կամ մեկնաբանման վրա:

Ցուցանիշ 7.4. Գոյություն ունի մանրամասն համապատասխանություն ազգային դասակարգումների ու համապատասխան Եվրոպական համակարգերի միջև:

Գործընթացի/ արտադրանքի մեթոդներ

1. **Ազգային դասակարգումների համապատասխանություն:** Ազգային դասակարգումները համահունչ են համապատասխան Եվրոպական դասակարգման համակարգերի հետ:

2. **Համապատասխանության աղյուսակներ:** Համապատասխանության աղյուսակները փաստաթղթավորված և արդիականացված են: Բացատրական նշումները կամ մեկնաբանությունները հանրայնացվում են:

3. **Դասակարգումների արդիականացում:** Ազգային դասակարգման համակարգերի արդիականացման ընթացակարգերն առկա են:

Ցուցանիշ 7.5. Համապատասխան գիտական առարկաներից շրջանավարտներ են հավաքագրվում:

Մեթոդներ ինստիտուցիոնալ մակարդակով

1. **Անձնակազմի հավաքագրում:** Վիճակագրական մարմնի անձնակազմը հավաքագրվում է բաց կերպով և համապատասխան առարկաներից համապատասխան որակավորումներով:

2. **Համագործակցություն համալսարանների հետ:** Վիճակագրական մարմինները կանոնավոր կապ են պահպանում ակադեմիական հաստատությունների հետ՝ համապատասխան գիտական առարկաների շրջանավարտներին խրախուսելու դիմել ստաժավորման և պաշտոնների համար:

3. **Պաշտոնների համար որակավորումներ:** Բոլոր պաշտոնների համար սահմանված են համապատասխան որակավորման պահանջներ:

Ցուցանիշ 7.6. Վիճակագրական մարմիններն իրենց անձնակազմի համար իրականացնում են շարունակական մասնագիտական ուսուցման քաղաքականություն:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. Անձնակազմի ուսուցման քաղաքականություն: Համապատասխան կառուցվածքը և կանոնավոր գործընթացներն առկա են, ապահովում են անձնակազմի շարունակական մասնագիտական վերապատրաստումը, որն անբաժանելի մասն է մարդկային ռեսուրսների քաղաքականության մեջ:

2. Շարունակական մասնագիտական վերապատրաստում: Շարունակական մասնագիտական վերապատրաստումը խրախուսվում և գնահատվում է կարիերայի ճանապարհին:

3. Անձնակազմի հմտությունների և ուսումնառության ոլորտների արդիականացում: Անձնակազմի հմտությունները արդիականացվում են նոր գործիքների և ուսումնառության ոլորտների վերաբերյալ:

4. Անձնակազմի մասնակցությունը դասընթացներին: Համապատասխան ուսումնական դասընթացներին և / կամ ազգային, Եվրոպական կամ այլ միջազգային կոնֆերանսներին անձնակազմի մասնակցությունը խրախուսվում է:

5. Դասընթացների պլանավորում: Ներքին դասընթացների կատալոգը և արտաքին դասընթացների օրացույցը կամ համապատասխան վերապատրաստման պլանը առկա են :

Ցուցանիշ 7.7. Վիճակագրական մարմինները համագործակցում են գիտական համայնքի հետ բարելավելու մեթոդաբանությունը, իրականացված մեթոդների արդյունավետությունը ու նպաստելու առավել լավ գործիքներին, երբ հնարավոր է:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Գիտական համայնքի հետ շփում:** Մեթոդաբանական, տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն զարգացումները քննարկելու նպատակով գիտական համայնքի հետ տեղի է ունենում պարբերաբար շփում, օրինակ՝

- կոնֆերանսների, սեմինարների, աշխատանքային հանդիպումների և ուսումնական դասընթացների միջոցով:
2. **Համեմատական մեթոդաբանական ուսումնասիրություններ:** Համեմատական մեթոդաբանական ուսումնասիրություններ են իրականացվում գիտական համայնքի հետ լավ փորձառությունները բացահայտելու նպատակով:
 3. **Համագործակցությունը գործընկերների հետ միջազգային մակարդակով:** Անձնակազմը մեթոդաբանական հարցերով համագործակցում է գործընկերների հետ միջազգային մակարդակով:
 4. **Կոնֆերանսներին մասնակցությունը և շնորհանդեսներ ներկայացնելը:** Գիտելիքների և փորձերի փոխանակման նպատակով խրախուսվում է համապատասխան (այսինքն, գիտնականների և այլ մասնագիտական փորձագետների ներկայությամբ) ազգային և միջազգային կոնֆերանսներին պարբերաբար մասնակցությունը և շնորհանդեսներ ներկայացնելը:
 5. **Կոնֆերանսների կազմակերպում:** Վիճակագրական մարմնի կողմից կազմակերպվում են ազգային և միջազգային կոնֆերանսներ, սեմինարներ, աշխատանքային հանդիպումներ կամ նմանատիպ միջոցառումներ գիտական համայնքի և այլ մասնագիտական փորձագետների մասնակցությամբ: Վիճակագրական մարմինների մասնակցությունը ողջունելի է:

Գործընթացի /արտադրանքի մեթոդներ

6. **Մեթոդաբանությունների արտաքին գնահատում:** Անհրաժեշտության դեպքում արտաքին փորձագետներից/ինչպիսին է գիտական համայնքը/ հայցվում են կիրառվող մեթոդաբանությունների գնահատականներ/ գնահատումները / աուդիտ:

Սկզբունք 8. Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր

Համապատասխան վիճակագրական ընթացակարգերն իրականացված՝ տվյալների հավաքումից մինչև տվյալների վավերացումը պետք է հիմք հանդիսանան վիճակագրության որակի համար:

Ցուցանիշ 8.1. Եթե Եվրոպական վիճակագրությունը հիմնված է վարչական և այլ տվյալների վրա, ոչ վիճակագրական նպատակով օգտագործվող սահմանումները և հասկացությունները պետք է լավ մոտարկված լինեն դրանց, որոնք պահանջվում են վիճակագրական նպատակների համար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վարչական և այլ տվյալների վիճակագրական մշակման պատասխանատվություն:** Վիճակագրական մարմինը պատասխանատու է Եվրոպական վիճակագրության մշակման, արտադրման և տարածման համար օգտագործվող վարչական և այլ տվյալների վիճակագրական մշակման համար:
2. **Վիճակագրական և վարչական տվյալների մշակման միջև տարբերությունը:** Վիճակագրական մշակումը, ակնհայտորեն, տարբերվում է վարչական և այլ տվյալների մշակումից: Մշակումը ներառում է որակի ստուգման համար վավերացման համապատասխան կանոններ և հատուկ ընթացակարգեր:
3. **Սահմանումների և հասկացությունների մոտարկումներ:** Վարչական կամ այլ տվյալների սահմանումներն ու հասկացությունները լավ մոտարկում են վիճակագրական նպատակներով պահանջվողներին: Վարչական կամ այլ տվյալներ տնօրինողները այս խնդրի վերաբերյալ պաշտոնապես խորհրդակցում են:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Վարչական կամ այլ տվյալների վիճակագրական նպատակներով մշակում:** Երբ վարչական կամ այլ տվյալներն օգտագործվում են վիճակագրական նպատակներով, տվյալները մշակվում են հատուկ դրանց վիճակագրական օգտագործման համար: Սա կարող է ենթադրել նոր փոփոխականների ստացում, վավերացման և իմպուտացիայի տարբեր կանոնների կիրառում, նոր տվյալների ֆայլերի ստեղծում, կշիռների և նոր ամփոփ տվյալների հաշվարկ և որակի հատուկ ստուգումներ:
5. **Վիճակագրական, վարչական և այլ տվյալների արտադրության գործընթացների փաստաթղթավորում:** Արկա է համապատասխան փաստաթղթավորում, որը նկարագրում է արտադրության գործընթացները բոլոր տեսակի տվյալների աղբյուրների համար (վիճակագրական, վարչական կամ այլ), հաշվի առնելով դրանց տարբերությունները սահմանումների, հասկացությունների, ընդգրկունության առումով:
6. **Տարբերությունները հասկացություններում:** Վիճակագրական նպատակներով օգտագործված վիճակագրական և այլ տեսակի

տվյալների (վարչական և այլ տվյալներ) հասկացությունների միջև տարբերությունները մանրակրկիտ ուսումնասիրվում են, նկարագրվում և փաստաթղթավորվում:

7. **Հասկացություններում տարբերությունների հետ վարվելու միջոցառումներ:** Ձեռնարկվում են միջոցառումներ վիճակագրական և այլ տեսակի տվյալների (վարչական և այլ տվյալներ) հասկացությունների միջև տարբերությունների հետ կապված և նկարագրվում են համապատասխան որակի հաշվետվություններում:

Ցուցանիշ 8.2. Վիճակագրական հետազոտությունների դեպքում, հարցաթերթերը պարբերաբար փորձարկվում են մինչ տվյալների հավաքումը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Հարցաթերթերը մշակելու ընթացակարգեր:** Առկա են հարցաթերթերը մշակելու, գնահատելու, վավերացնելու և արդիականացնելու ընթացակարգեր, որոնք ներգրավում են համապատասխան փորձագետների (օրինակ՝ վիճակագրական ոլորտում, հարցաթերթի մշակման գործում, լեզու, գիտական համայնքից):

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

2. **Հարցաթերթի փորձարկում:** Նախքան տվյալների հավաքումը, հետազոտության հարցաթերթերը փորձարկվում են համապատասխան մեթոդներով (հարցաթերթի նախնական փորձարկում, փորձարկում իրական իրավիճակում, խորը հարցազրույցներ, ֆոկուսային խմբեր, հարցազրուցավարի աջակցություն և այլն):

3. **Փորձարկման արդյունքների օգտագործում:** Փորձարկման արդյունքները հաշվի են առնվում վերջնական հարցաթերթի իրականացման գործընթացում և փաստաթղթավորվում են հաշվետվության մեջ:

Ցուցանիշ 8.3. Վիճակագրական գործընթացները արմատապես մշտադիտարկվում և վերանայվում են, ինչպես պահանջվում է:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ուղեցույցների, մեթոդաբանությունների և մեթոդների ուսումնասիրության կազմակերպական կառուցվածք:** Համապատասխան կազմակերպական կառուցվածքը տրամադրում է ուղեցույցներ, առաջարկում է համապատասխան մեթոդաբանություններ և պարբերաբար ուսումնասիրում և վերանայում է վիճակագրական մշակման համար օգտագործվող մեթոդները:
2. **Մեթոդների վերաբերյալ հաշվետվության ներկայացում հանրությանը:** Վիճակագրական մարմինը հրապարակավ հաղորդում է վիճակագրական մշակման մեջ օգտագործվող մեթոդների վերաբերյալ: Այս հաշվետվությունները հրապարակայնորեն մատչելի են:
3. **Ստանդարտների և լավագույն փորձառությունների խթանում և փոխանակում:** Վիճակագրության մշակման վիճակագրական ստանդարտները և լավագույն փորձառությունները խթանվում և կիսվում են վիճակագրության որակի բարելավման և գործընթացների ներդաշնակեցման խրախուսման համար (օրինակ՝ Ազգային վիճակագրական ինստիտուտի, Եվրոպական վիճակագրական համակարգի ազգային վիճակագրական համակարգի ներսում և այլն):
4. **Մեթատվյալներով ուղղորդված:** Վիճակագրական մարմինները նպաստում են մեթատվյալներով ուղղորդված գործընթացների զարգացմանը:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

5. **Վիճակագրական գործընթացների նախագծում:** Հետազոտության , վարչական, բազմակի կամ այլ աղբյուրի տվյալների վրա հիմնված վիճակագրական գործընթացները ձևավորվում են լավ փորձառություններին և ստանդարտներին համապատասխան:
6. **Ընտրանքի կառուցվածքների նորացում:** Ընտրանքի կառուցվածքները պարբերաբար նորացվում են կրկնվող հետազոտությունների համար համաձայն հստակության պահանջների:
7. **Հարցաթերթերի ձևավորման, փորձարկման և արդիականացման կարգը:** Հարցաթերթերի ձևավորման, փորձարկման և արդիականացման կարգն առկա է համաձայն լավ փորձառությունների և ստանդարտների:
8. **Ոչ ընտրանքային սխալների չափում:** Ոչ ընտրանքային սխալներ (ընդգրկվածություն, չափում, մշակում, չպատասխանելու սխալները, ինչպես նաև վարչական և այլ տվյալների աղբյուրների և մոդելի ենթադրական սխալների շեղումները) պարբերաբար մշտադիտարկվում են, և արդյունքները օգտագործվում են գործընթացի կատարելագործման համար:

9. **Ընտրանքի և գնահատման մեթոդների գնահատում:** Ընտրանքային սխալները սովորաբար չափվում են ընտրանքային և գնահատման մեթոդները գնահատելու նպատակով:
10. **Տվյալների հավաքման մեթոդների գնահատում:** Տվյալների հավաքման մեթոդներն ու տվյալների հավաքման ձևերը պարբերաբար գնահատվում են:
11. **Փաստաթղթերի տրամադրում ռեսպոնդենտներին:** Ռեսպոնդենտներին տրամադրվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (այսինքն՝ նամակներ, հարցաթերթիկներ, թերթիկներ, հատկապես ինքնավար հարցաթերթերի դեպքում): Այս փաստաթղթերը պարբերաբար վերանայվում են:
12. **Աջակցություն ռեսպոնդենտներին:** Ռեսպոնդենտներին աջակցում են հարցաթերթերը լրացնելիս: Առկա են ռեսպոնդենտների հայցումներին և բողոքներին պատասխանելու ընթացակարգեր և դրանք դյուրինորեն հասանելի են:
13. **Ուսումնական դասընթացներ հարցազրուցավարների համար:** Հարցազրուցավարների համար կազմակերպվում են ուսումնական դասընթացներ և աշխատանքային հանդիպումներ /ներառյալ հարցազրույցի վարման տեխնիկաները/: Յուրաքանչյուր հետազոտության համար գոյություն ունեն հարցազրուցավարի ձեռնարկ/ տեղեկագիրք և իրականացվում են հարցազրուցավարին ուղեկցող ընթացակարգեր:
14. **Տվյալների հավաքումը մշտադիտարկելու կարգ:** Տվյալների հավաքումը պարբերաբար դիտարկվում և օպտիմալացվում է: Դա ներառում է, ի թիվս այլ տարրերի, տվյալների հավաքման եղանակի, հետազոտության երկարության, պատասխանելու մակարդակի, հարցազրույցի կատարողականի և վարչական կամ այլ տվյալների փոխանցումների մշտադիտարկում:
15. **Պատասխանի բացակայության դեպքում հետամուտ լինելու ընթացակարգ:** Առկա են և իրականացվում են հետամուտ լինելու ընթացակարգեր պատասխանի բացակայության դեպքում՝ պատասխանելու մակարդակը բարելավելու և չպատասխանելու շեղումները կառավարելու նպատակով:
16. **Տվյալների կողավորման մեթոդների փաստաթղթավորում և տրամադրում:** Տվյալների կողավորման մեթոդները փաստաթղթավորվում և պահպանվում են: Այդ մեթոդները տրամադրվում են համապատասխան անձնակազմին:
17. **Խմբագրման, իմպուտացիայի և վիճակագրական բացահայտման վերահսկման տեխնիկաների համապատասխանությունը ստանդարտների հետ:** Խմբագրման, իմպուտացիայի և վիճակագրական բացահայտման վերահսկման

տեխնիկաներիը հետևում են ստանդարտ մեթոդաբանական կանոններին և լավագույն փորձառություններին և փաստաթղթավորվում են:

18. **Տվյալների ինտեգրում:** Բազմաթիվ աղբյուրներից ստացված վիճակագրության դեպքում տվյալների ինտեգրման ընթացակարգերը համապատասխանում են լավագույն փորձառություններին և ստանդարտներին:
19. **Վիճակագրական մոդելների օգտագործում:** Վիճակագրական մոդելավորում օգտագործելիս, օրինակ, սեզոնային ճշգրտումը, ենթադրությունների չափը, ինչպես նաև հաշվարկների վրա ազդեցությունը գնահատվում է:
20. **Ավտոմատացված մեթոդներ:** Ավտոմատացված մեթոդները խթանվում, մշտադիտարկվում և անհրաժեշտության դեպքում վերանայվում են:
21. **Գործընթացի որակի ցուցանիշներ:** Գործընթացների որակի ցուցանիշները պարբերաբար հաշվարկվում և ստուգվում են: Գործընթացները համապատասխանաբար վերանայվում են:
22. **Գործընթացի նկարագրություններ:** Գործընթացների նկարագրությունները իրականացվում են Ընդհանուր վիճակագրական բիզնես գործընթացների մոդելի (GSBPM) կամ այլ համապատասխան մոդելների համաձայն՝ ապահովելու գործընթացի վերարտադրելիությունը, տվյալների հետևումը և բարելավման գործողությունների սահմանումը:

Ցուցանիշ 8.4. Վիճակագրական գործընթացներին վերաբերող մեթատվյալները կառավարվում են վիճակագրական գործընթացների ընթացքում և տարածվում, ըստ անհրաժեշտության:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Մեթատվյալների կառավարում:** Առկա է կազմակերպական կառուցվածք ապահովելու, որ մեթատվյալները հանդիսանում են վիճակագրական գործընթացների անբաժանելի մասը: Մեթատվյալների կառավարումն արդյունավետ է գործընթացի բոլոր փուլերում: Մեթատվյալները ներառում են տեղեկատվական մեթատվյալներ (օրինակ՝ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքը (SIMS)), կառուցվածքային մեթատվյալներ (հասկացություններ, դասակարգումներ, տվյալների կառուցվածք և այլն) և գործընթացի մեթատվյալներ:
2. **Մեթատվյալների տարածման ընթացակարգ:** Հստակ, ամբողջական և արդի մեթատվյալները տարածվում են համաձայն ESS ստանդարտների, այսինքն՝ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS):

3. Մեթատվյալների ստանդարտների և որակի հաշվետվությունների վերաբերյալ դասընթացներ անձնակազմի համար: Համապատասխան անձնակազմի համար անց են կացվում մեթատվյալների ստանդարտների օգտագործման և որակի հաշվետվությունների վերաբերյալ դասընթացներ:

Գործընթացի / արտադրանքի մեթոդներ

4. Վիճակագրական գործընթացների վերաբերյալ մեթատվյալներ: Վիճակագրական գործընթացների վերաբերյալ հստակ, ստանդարտացված և ամբողջական մեթատվյալները կազմվում և արդիականացված են՝ համաձայն ESS ստանդարտների, այսինքն՝ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS):

Ցուցանիշ 8.5. Վերանայումները հետևում են ստանդարտ, լավ հիմնված և թափանցիկ ընթացակարգերին:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. Վերանայման քաղաքականություն: Վերանայման քաղաքականությունը, որտեղ նշվում են սկզբունքները և ստանդարտ և թափանցիկ ընթացակարգերը, մշկված է եվրոպական պահանջների համաձայն և հասանելի է հանրությանը:
2. Վերանայումների հետ կապված ուղեցույցներ և սկզբունքներ: Գոյություն ունեն հրապարակված վիճակագրության վերանայմանն առնչվող ուղեցույցներ և սկզբունքներ: Դրանք լայնորեն կիրառվում են և հանրորեն մատչելի են:
3. Վերանայումների օրացույց: Վերանայումների օրացույցը կազմվում և հասանելի է հանրությանը:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. Վերանայումների և դրանց հրապարակման բացատրություն: Հրապարակված տվյալների վերանայումներն ուղեկցվում են համապատասխան մեթատվյալներով, որոնք տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվություն: Մեթատվյալները հանրորեն հասանելի են:

Ցուցանիշ 8.6. Վարչական և այլ տվյալների սեփականատերերի հետ կնքվում են պայմանագրեր, որտեղ սահմանվում են այդ տվյալները վիճակագրական նպատակներով օգտագործելու հետ կապված իրենց ընդհանուր պարտավորությունը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Պայմանագրեր վարչական և այլ տվյալների սեփականատերերի հետ:** Վիճակագրական մարմինների և վարչական և այլ տվյալների սեփականատերերի միջև կնքվում են պայմանագրեր: Երբ վարչական և այլ տվյալների համակարգերը մշակվում կամ վերանայվում են, այդպիսի պայմանագրերը նպաստում են, որ վիճակագրական կարիքները հաշվի առնվեն:
2. **Ուղեցույց տվյալների նոր աղբյուրների վերաբերյալ:** Ուղեցույցը, թե ինչպես կարելի է բացահայտել և օգտագործել տվյալների նոր աղբյուրների վիճակագրական ներուժը տրամադրվում է անձնակազմին:
3. **Կարողություններ:** Վիճակագրական մարմիններն ունեն անհրաժեշտ կարողություններ և SS ենթակառուցվածք երաշխավորելու վարչական և այլ տվյալների անվտանգ պահպանումն ու օգտագործումը:

Գործընթացի/արտադրանքի մեթոդ

4. **Փաստաթղթավորում վարչական և այլ տվյալների վերաբերյալ:** Տվյալներ տնօրինողները պարբերաբար վիճակագրական մարմնին տրամադրում են վարչական և այլ տվյալների բովանդակության և տվյալների արտադրական գործընթացի (ինչպիսիք են՝ մեթոդաբանական փաստաթուղթը, հասկացությունները և սահմանումները և համակցությունները) վերաբերյալ փաստաթղթավորումը/մեթատվյալները:

Ցուցանիշ 8.7. Վիճակագրական մարմինները համագործակցում են վարչական տվյալների սեփականատերերի հետ տվյալների որակի ապահովման հետ կապված:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վարչական և այլ տվյալներ տնօրինողների իրազեկումը:** Ընթացակարգերն առկա են ապահովելու, որ վարչական և այլ տվյալներ տնօրինողները տեղեկացվեն այն մասին, թե ինչպես են իրենց տվյալներն օգտագործվում վիճակագրության նպատակներով և նրանք ստանում են տեղեկատվություն տրամադրված տվյալների որակի վերաբերյալ՝ հետագա բարելավումների նպատակով: Վիճակագրական մարմինների անձնակազմը իրազեկված է այս ընթացակարգերի վերաբերյալ:
2. **Որակի պահանջներ:** Վիճակագրական մարմիններն ապահովում են, որ վարչական և այլ տվյալներ տնօրինողները իրազեկ լինեն վիճակագրական արտադրության համար որակի նկատառումների և պահանջների մասին:
3. **Տվյալների ուղղման քաղաքականություն:** Երբ վիճակագրական մարմինները հայտնաբերում են սխալ տվյալներ կամ որակի խնդիրներ վարչական կամ այլ տվյալներում, նրանք այդ տվյալները տնօրինողներին տեղեկացնում են ոչ ճիշտ տվյալների կամ հայտնաբերված խնդիրների վերաբերյալ՝ առանց խախտելու վիճակագրական գաղտնիության կանոնները՝ նպատակ ունենալով բարելավելու հետագա տվյալների հավաքածուները: Տվյալների ուղղման քաղաքականությունը հայտնի է վիճակագրական մարմինների անձնակազմին:
4. **Համագործակցություն:** Վիճակագրական մարմինները վարչական և այլ տվյալներ տնօրինողներին առաջարկում են վերապատրաստման դասընթացներ և գործիքներ, ինչպիսիք են ուղեցույցները՝ որակի վերահսկման և որակի ապահովման վերաբերյալ:

Գործընթացի/ արտադրանքի մեթոդներ

5. **Շարունակական բարելավում:** Գործում են ընթացակարգեր տեղեկացնելու տվյալների տերերին հայտնաբերված ոչ ճիշտ տվյալների կամ որակի խնդիրներ վերաբերյալ՝ առանց խախտելու վիճակագրական գաղտնիության կանոնները: Վիճակագրական մարմինների աշխատակազմը իրազեկ է ընթացակարգերի վերաբերյալ:

Սկզբունք 9. Ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածություն

Հաշվետվական ծանրաբեռնվածությունը համեմատական է օգտագործողների կարիքներին և չափազանցված չէ ռեսպոնդենտների համար: Վիճակագրական

մարմինն իրականացնում է ծանրաբեռնվածության մշտադիտարկում և սահմանում է թիրախներ դրա նվազեցման համար ժամանակի ընթացքում:

Սկզբունք 9.1. Եվրոպական վիճակագրության տեսակների և մանրամասնության պահանջները սահմանափակվում են այնքանով, ինչը բացարձակապես անհրաժեշտ է:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Եվրոպական վիճակագրության համար գերակայությունները:** Եվրոպական վիճակագրության համար գերակայությունները սահմանվում են ԵՎՀ-ի մակարդակով՝ հաշվի առնելով ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը:
2. **Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության և մանրամասնեցվածության մակարդակի ստուգում:** Եվրոպական վիճակագրության վերաբերյալ ԵՄ կանոնակարգերի վերլուծությունն իրականացվում է, որպեսզի ստուգվի ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը և կանոնակարգերով նախատեսված փոփոխականների մանրամասնեցվածության մակարդակը:
3. **Վիճակագրական աշխատանքների ծրագրի գնահատում:** Վիճակագրական աշխատանքների ծրագրի բովանդակությունը գնահատվում է վիճակագրական մարմնում կրկնօրինակումը և ավելորդ կրկնությունը վերացնելու նպատակով:

Գործընթացի/ արտադրանքի մեթոդներ

4. **Վիճակագրական տեղեկատվության կարիքների վերլուծություն:** Վիճակագրական տեղեկատվության և ըստ ոլորտի մանրամասնեցվածության մակարդակը վերլուծվում, փաստաթղթավորվում և սահմանվում է: Ռեսպոնդենտների հարցումները համապատասխանաբար ճշգրտվում են՝ պատասխանելու ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով:

Ցուցանիշ 9.2. Հաշվետվական ծանրաբեռնվածությունը հնարավորինս լայնորեն տարածվում է հետազոտությունների համակցությունների վրա և մշտադիտարկվում վիճակագրական մարմնի կողմից:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ռեսպոնդենտների միջև ծանրաբեռնվածության հավասարակշռում:** Առկա են ընթացակարգեր և գործիքներ ռեսպոնդենտների միջև ծանրաբեռնվածությունը հնարավորինս բաշխելու համար:

Գործընթացի/արտադրանքի մեթոդ

2. **Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափում:** Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը պարբերաբար և ստանդարտացված եղանակով չափվում և մշտադիտարկվում է, ներառյալ հարցաթերթի լրացումը, անհրաժեշտ տեղեկատվության ստացումը, ներքին կամ արտաքին փորձառությունը և զգայուն տեղեկատվության կառավարումը:
3. **Հաշվետվական ծանրաբեռնվածության վերանայումներ:** Կանոնավոր կերպով ձեռնարկվում են հաշվետվական ծանրաբեռնվածության վերանայումներ և համապատասխան միջոցառումներ՝ վերանայման արդյունքներին համապատասխան:
4. **Հաշվետվական ծանրաբեռնվածության կրճատում:** Հաշվետվական ծանրաբեռնվածությունը կրճատվում է համապատասխան ընտրանքի և տվյալների հավաքման ձևի միջոցով, օգտագործելով օրինակ՝ տվյալների հավաքման առավել հարմար մեթոդները՝ համակարգված ընտրանքը, ռեսպոնդենտների ռոտացիոն ընտրությունը, հարցերի սահմանափակումը, ռեսպոնդենտների օժանդակությունը հետազոտական հարցերով, վարչական և տվյալների այլ աղբյուրների օգտագործման ավելացումը:
5. **Գործողությունների պլաններ տվյալների հավաքման պարզեցման/մոդեռնիզացիայի համար:** Պարզեցման/մոդեռնիզացիայի համար գործողությունների պլաններ են մշակվում, իրականացվում և մշտադիտարկվում ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով:

Ցուցանիշ 9.3. Բիզնեսներից հայցվող տվյալները, որոնք մատչելի են իրենց հաշիվներից և էլեկտրոնային միջոցները, որքան հնարավոր է օգտագործվում են, դյուրին դարձնելու դրանց փոխանցումը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ընթացակարգեր և տեխնիկական գործիքներ:** Մշակվում են ընթացակարգեր և տեխնիկական գործիքներ (օրինակ՝ ծրագրային ապահովում), բիզնեսներից

տվյալների հավաքման համար էլեկտրոնային միջոցների օգտագործումը ընդլայնելու նպատակով:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

2. **Բիզնեսի հաշվապահական համակարգերից տվյալների ստացում:** Առկա են բիզնեսի հաշվապահական համակարգերից ուղղակիորեն տվյալներ ստանալու ծրագրային ապահովման մեթոդներ և գործիքներ:
3. **Համագործակցություն գործարար համայնքի հետ:** Հետազոտության ղեկավարները աշխատում են գործարար համայնքի հետ միասին, որպեսզի համապատասխան լուծումներ գտնեն տեղեկատվություն ստանալու պոտենցիալ դժվարությունների վերաբերյալ:
4. **Բիզնեսների իրազեկում հետազոտության արդյունքների վերաբերյալ:** Տվյալների հավաքման մեջ իրենց մասնակցության խրախուսման և հաստատման նպատակով, բիզնեսները տեղյակ են պահվում հետազոտության արդյունքների վերաբերյալ:

Ցուցանիշ 9.4. Վարչական և տվյալների այլ աղբյուրներն օգտագործվում են, երբ հնարավոր է խուսափելու տվյալների կրկնվող հարցումներից:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վարչական և տվյալների այլ աղբյուրների օգտագործումը ընդլայնելու համագործակցություն:** Համագործակցային ցանցերը մշակում են գործիքներ և մեթոդներ՝ վարչական և տվյալների այլ աղբյուրների օգտագործումը ընդլայնելու նպատակով:
2. **Այլընտրանքային տվյալների աղբյուրների դիտարկումը:** Այլընտրանքային տվյալների աղբյուրներ (ներառյալ առկայությունը և առկա հետազոտությունների և վարչական տվյալների համապատասխանությունը) դիտարկվում են տվյալների հավաքման օպտիմալացման համար:
3. **Ուղեցույց տվյալների աղբյուրների վերաբերյալ:** Ուղեցույցը, օրինակ, մեթոդական խորհուրդը և վերապատրաստումը առկա է անձնակազմի համար՝ բացահայտելու և օգտագործելու վարչական և տվյալների այլ աղբյուրների վիճակագրական ներուժը և ապահովելու դրանց որակը:

4. **SS գործիքներ վարչական և այլ տվյալների հավաքման համար:** Մշակվում և իրականացվում են վիճակագրական նպատակներով օգտագործվելիք վարչական և այլ տվյալների հավաքման համար SS գործիքներ:

Ցուցանիշ 9.5. Տվյալների փոխանակումը և տվյալների ինտեգրումը՝ միաժամանակ պահպանելով գաղտնիության և տվյալների պաշտպանվածության պահանջները, խթանվում են պատասխանելու ծանրաբեռնվածությունը նվազագույնի հասցնելու նպատակով:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Համաձայնագրեր և գործիքներ տվյալների փոխանակման համար:** Տվյալների փոխանակման համար գոյություն ունեն պաշտոնական համաձայնագրեր և գործիքներ ազգային և եվրոպական վիճակագրական համակարգերի շրջանակներում (օրինակ՝ վեբ ծառայություններ և տվյալների միասնական բազա):
2. **Տվյալների ինտեգրման մեթոդներ և գործիքներ:** Մեթոդները (օր.՝ բազմաղբյուր մոտեցումներ և համընկնման տեխնիկաներ) և տվյալների ինտեգրման գործիքները գործում են վիճակագրական մարմիններում:
3. **Տվյալների արխիվների փոխանցում:** Անհրաժեշտության դեպքում տվյալների արխիվները փոխանցվում են վիճակագրական մարմինների ներսում՝ գաղտնիության քաղաքականությանը համապատասխանելով:
4. **Ռեգիստրի վրա հիմնված ազգային վիճակագրական համակարգերի խթանում:** Ռեգիստրի վրա հիմնված ազգային վիճակագրական համակարգի ստեղծումը՝ օգտագործելով առկա բոլոր տվյալները, խրախուսվում է :
5. **Փոխանցվելիք հիմնական փոփոխականները:** Գաղտնիության կանոններին համապատասխան, վիճակագրական մարմինները սահմանում են հիմնական փոփոխականները, որոնք անհրաժեշտ է համօգտագործել վիճակագրական գործընթացներում:

Ցուցանիշ 9.6. Վիճակագրական մարմինները միջոցներ են ձեռնարկում, որոնք հնարավորություն կտան շաղկապելու տվյալների աղբյուրները՝ հաշվետվական ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով:

1. **Տվյալները կապակցելու ուղեցույցներ, մեթոդներ և գործիքներ:** Ուղեցույցները, մեթոդներն ու գործիքներն առկա են աջակցելու տվյալների կապակցմանը:
2. **Փոխկապակցելու հիմնական փոփոխականները:** Վիճակագրական մարմինները սահմանում են այն հիմնական փոփոխականները, որոնք անհրաժեշտ է փոխկապակցել վիճակագրական գործընթացների միջև:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

3. **Կապակցման որակի գնահատում:** Երբ փոփոխականները ծագում են տվյալների տարբեր աղբյուրներից, դրանք կապակցվում են և իրականացվում է տվյալների կապակցման գնահատում:

Սկզբունք 10. Ծախսերի արդյունավետություն

Ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ:

Ցուցանիշ 10.1. Ներքին և անկախ արտաքին միջոցները վերահսկում են վիճակագրական մարմնի ռեսուրսների օգտագործումը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ռեսուրսների մշտադիտարկման և հաշվետվողականության ցուցանիշներ:** Մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների օգտագործման ներքին մշտադիտարկումը իրականացվում է կենտրոնական մարմնի կողմից: Արտաքին անկախ մշտադիտարկումը իրականացվում է ըստ պահանջի: Արդյունքները զեկուցվում են ղեկավարությանը:
2. **Վիճակագրական արտադրության ծախսերը :** Վիճակագրության ծախսերը արտադրության յուրաքանչյուր փուլում գնահատվում են՝ վիճակագրական մարմիններում դրանց արդյունավետությունը և օպտիմիզացումը գնահատելու նպատակով և լավ փաստաթղթավորված են:
3. **Վիճակագրական գործընթացների համար ռեսուրսների հատկացում:** Հաշվապահական համակարգերը հնարավորություն են տալիս հատկացնել ռեսուրսներ վիճակագրական գործընթացների համար:
4. **Անձնակազմի գնահատում:** Անձնակազմը տարեկան գնահատվում է գրասենյակի ուղեցույցներին համահունչ: Գնահատումն ընդգրկում է

անձնակազմի բաշխման, կատարողականի, հմտությունների, աշխատանքային և ուսուցման կարիքները:

5. Անձնակազմի կարծիքի/բավարարվածության հետազոտություններ: Պարբերաբար իրականացվում են անձնակազմի կարծիքի/բավարարվածության հետազոտություններ:

6. SS ենթակառուցվածքի վերանայումներ: SS ենթակառուցվածքը պարբերաբար վերանայվում է:

7. Ծախսերը հաշվարկելու ընթացակարգեր: Առկա են և օգտագործվում են վիճակագրական գործընթացների համար ակնկալվող ծախսը հաշվարկելու ընթացակարգեր:

Ցուցանիշ 10.2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների արտադրողականության ներուժն օպտիմալացվում է վիճակագրական գործընթացների համար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Ռեսուրսների միավորում, ներդրումներ և նորարարության / մոդերնիզացիայի ներուժի բացահայտում:** Կենտրոնացված SS և մեթոդաբանական ստորաբաժանումներն ապահովում են ռեսուրսների միավորումը, ներդրումները և նորարարության / մոդերնիզացիայի ներուժի բացահայտումը՝ վիճակագրական գործընթացներն օպտիմալացման նպատակով:
- 2. SS ճարտարապետություն և ռազմավարություն:** Առկա է համապատասխան SS ճարտարապետություն և ռազմավարություն և պարբերաբար արդիականացվում է:
- 3. Մեքենայական տեխնիկաների խթանում:** Առկա են վիճակագրական գործընթացների համար մեքենայական տեխնիկաները խթանող քաղաքականություններ, ընթացակարգեր և գործիքներ, հիմնված ընդհանուր ստանդարտների (օր.՝ տվյալների հավաքում, կոդավորում, վավերացում, հաշվետվություն և այլն) և ընդհանուր վիճակագրական ծառայությունների փոխանակման վրա:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Մեքենայացված մշակման տեխնիկաներ:** Մեքենայացված մշակման տեխնիկաները պարբերաբար վերանայվում և մոդեռնիզացվում են:

Ցուցանիշ 10.3. Ակտիվ ջանքեր են գործադրվում բարելավելու վարչական և տվյալների այլ աղբյուրների վիճակագրական ներուժը և սահմանափակելու ուղղակի հետազոտությունները:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Հանդիպումներ վարչական և այլ տվյալներ տնօրինողների հետ:** Պարբերաբար հանդիպումներ են տեղի ունենում վարչական և այլ տվյալներ տնօրինողների հետ՝ քննարկելու, թե ինչպես բարելավել և բարձրացնել իրենց տվյալների օգտագործումը:
2. **Հնարավոր վարչական և տվյալների այլ աղբյուրների գնահատում:** Մինչ հետազոտություն սկսելը, հատկապես նոր հետազոտություն, իրականացվում է հնարավոր վարչական և տվյալների այլ աղբյուրների գնահատում:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

3. **Տվյալների նոր աղբյուրների վիճակագրական ներուժի ուսումնասիրում:** Կան մեխանիզմներ ուսումնասիրելու տվյալների նոր աղբյուրների առկայությունը՝ արդեն իսկ գոյություն ունեցող վիճակագրական արտադրանքների բարելավման համար:
4. **Տվյալների կապակցման և ինտեգրման մեթոդներ:** Տվյալների կապակցման և ինտեգրման մեթոդներն ակտիվորեն հետևվում են հաշվի առնելով տվյալների գաղտնիության և անվտանգության նկատառումները:
5. **Որակի ցուցանիշներ:** Որակի ցուցանիշներն օգտագործվում են վիճակագրական նպատակներով վարչական և այլ տվյալների օգտագործման մեթոդները կատարելագործելու նպատակով:

Ցուցանիշ 10.4. Վիճակագրական մարմինները խթանում և իրականացնում են ստանդարտացված լուծումներ՝ արդյունավետությունը և էֆեկտիվությունը բարձրացնելու համար:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վիճակագրական գործընթացների համար ստանդարտացման ծրագրեր և ընթացակարգեր:** Ստանդարտացման ծրագրերը և ընթացակարգերը

սահմանվում և իրականացվում են վիճակագրական արտադրության հիմնական փուլերում;

2. **Ստանդարտների ընդունման կամ մշակման ռազմավարություն:** Առկա է տարբեր ոլորտներում ստանդարտների ընդունման կամ մշակման ռազմավարություն, օրինակ՝ որակի կառավարում, գործընթացների մոդելավորում, ծրագրային ապահովման մշակում, ծրագրային ապահովման գործիքներ, նախագծի կառավարում և փաստաթղթային կառավարում:
3. **Ստանդարտացված լուծումների փոխանակում:** Վիճակագրական մարմինները կիսում և վերօգտագործում են առկա ստանդարտացված լուծումներ (գործիքներ և մեթոդներ), որոնք բարձրացնում են վիճակագրական գործընթացների արդյունավետությունն ու էֆեկտիվությունը: Նրանք մասնակցում են այդպիսի գործիքների մշակման վերաբերյալ համատեղ նախագծերի, աշխատանքային խմբերի կամ վերապատրաստման դասընթացների՝ զարգացման ծանրաբեռնվածությունը կիսելու նպատակով:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Ստանդարտացում:** Գործողություններ են ձեռնարկվում՝ հիմք ընդունելով իրականացման ծրագիրը, աստիճանաբար շարժվելու դեպի կամ ստանդարտացմանը համապատասխանելու համար և նկարագրված են որակի հաշվետվություններում կամ այլ փաստաթղթերում:

Վիճակագրական արտադրանք

Առկա վիճակագրությունը բավարարում է օգտագործողների պահանջները: Վիճակագրությունը համապատասխանում է Եվրոպական որակի ստանդարտներին և ծառայում է Եվրոպական հաստատությունների, կառավարությունների, հետազոտական հաստատությունների, գործարար ընկերությունների և ընդհանրապես հասարակության կարիքներին: Արտադրանքի որակը չափվում է, թե որքանով է վիճակագրությունը համապատասխան, ճշգրիտ և արժանահավատ, ժամանակին, համաձայնեցված, համադրելի տարածաշրջաններում և երկրներում ու հեշտությամբ մատչելի օգտագործողներին. Վիճակագրական արտադրանքի սկզբունքներ:

Սկզբունք 11. Համապատասխանություն.

Եվրոպական վիճակագրությունը բավարարում է օգտագործողների պահանջները:

Ցուցանիշ 11.1. Գործընթացներն առկա են խորհրդակցելու օգտագործողների հետ, նրանց պահանջները բավարարելու համար առկա վիճակագրության համապատասխանությունը և օգտակարությունը վերահսկելու և ուսումնասիրելու նրանց զարգացող կարիքները և առաջնահերթությունները: Նորարարությունը հետևվում է վիճակագրության շարունակական կատարելագործման նպատակով:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Օգտագործողների հետ խորհրդակցելու վերաբերյալ օրենսդրություն:** Վիճակագրական օրենքները (ազգային և եվրոպական) ներառում են օգտագործողների հետ պաշտոնական վիճակագրության իրենց կարիքների վերաբերյալ խորհրդակցելու պարտավորություն:
2. **Օգտագործողների հետ խորհրդակցելու նպատակը:** Օգտագործողների խորհրդատվություններից ստացված արձագանքն օգտագործվում է վիճակագրական աշխատանքների ծրագրի նախապատրաստման, զարգացող կարիքների ու առաջնահերթությունների բացահայտման, վիճակագրական արտադրանքների որակի բարելավման և վիճակագրության արժեքի մշտադիտարկման նպատակով:
3. **Օգտագործողների խորհրդատվության ընթացակարգեր:** Առկա են օգտագործողներին իրենց կարիքների վերաբերյալ խորհրդատվության գործընթացներ և միջոցառումներ: Օրինակ, դրանք բաղկացած են օգտագործողների հանձնաժողովների ստեղծումից, հիմնական օգտագործողների և վիճակագրական մարմինների կանոնավոր հանդիպումներից, հիմնական օգտագործողների կամ այլ համապատասխան շահառուների խորհրդատվությունից, հատուկ հարցերի կամ օգտագործողների անհատական հայցումների և պատասխանների մշակման վերաբերյալ փորձագետների հմտություններին դիմելուց:
4. **Վիճակագրության օգտագործման վերլուծություն:** Վիճակագրության օգտագործման վերաբերյալ տվյալները (օրինակ՝ ներբեռնումների գնահատում, հաշվետվությունների բաժանորդներ, վեբ վերլուծություն) վերլուծվում են (օրինակ՝ ըստ վիճակագրական բնագավառի և օգտագործողների տեսակի) վիճակագրական արտադրանքների բարելավման նպատակով:
5. **Վիճակագրական թողարկման համապատասխանությունը:** Գործում են ընթացակարգեր վերանայելու վիճակագրական թողարկման համապատասխանությունը օգտագործողների համար, ներառյալ դրա

օգտագործումը որպես այլ գործընթացների համար աղբյուր և դրա դադարեցման հնարավոր ազդեցությունը:

- 6. Նորարարություն:** Նորարարական վիճակագրական մեթոդներն ու գործիքները մշակվում և օգտագործվում են վիճակագրական թողարկումների արժեքն ու համապատասխանությունը կատարելագործելու համար:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

- 7. Հիմնական օգտագործողներ:** Բոլոր համապատասխան շահագրգիռ խմբեր ընդգրկող առանցքային օգտագործողների ցանկը, նրանց օգտագործած տվյալները և չբավարարված կարիքները պարբերաբար արդիականացվում են:

- 8. Օգտագործողների դասակարգում և պրոֆիլավորում:** Օգտագործողների դասակարգումը և պրոֆիլավորումը պարբերաբար արդիականացվում է և օգտագործվում խորհրդատվական և արտադրանքների և ծառայությունների բարելավման նպատակով:

- 9. Որակի ցուցանիշ (ներ) :** Համապատասխանության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար մշտադիտարկվում և հրապարակվում է (են) որակի հաշվետվություններում:

- 10. Համապատասխանության վերլուծություն և գնահատում:** Համապատասխանության վերաբերյալ որակի ցուցանիշները պարբերաբար վերլուծվում և գնահատվում են վիճակագրական գործընթացները կատարելագործելու նպատակով:

Ցուցանիշ 11.2. Առաջնահերթ կարիքները բավարարվում և արտացոլվում են աշխատանքային ծրագրում:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Վիճակագրական աշխատանքների ծրագրի առաջնահերթությունները:** Իրականացվում են ընթացակարգեր աշխատանքային ծրագրում սահմանելու տարբեր օգտագործողների կարիքներն ըստ առաջնահերթությունների:
- 2. Ռազմավարական նպատակներ և ծրագրեր:** Ռազմավարական նպատակները և ծրագրերը պարբերաբար մշակվում և հրապարակվում են: օգտագործողների կարիքները հաշվի են առնվում ծախս/շահ նկատառումներից ելնելով:

3. **Համաձայնագրեր հիմնական օգտագործողների հետ:** Համագործակցության պայմանագրեր, սպասարկման մակարդակի պայմանագրեր կամ նմանատիպ պայմանավորվածություններ են ձեռք բերվում հիմնական օգտագործողների հետ առաջնահերթ կարիքները սահմանելու և փաստաթղթավորելու նպատակով:
4. **Վիճակագրական աշխատանքների ծրագրի գնահատում:** Պարբերաբար իրականացվում է աշխատանքային ծրագրի գնահատում՝ նոր առաջնահերթությունները բացասական առաջնահերթությունները և առաջացող կարիքները բացահայտելու նպատակով:

Ցուցանիշ 11.3. Օգտագործողների բավարարվածությունը վերահսկվում է կանոնավոր հիմքով և սիստեմատիկորեն ուսումնասիրվում է:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Օգտագործողների բավարարվածության չափում:** Օգտագործողների բավարարվածությունը չափվում է հետազոտությունների, նմանատիպ ուսումնասիրությունների, կայքից ստացված արձագանքների, արտադրանքների օգտագործման վերաբերյալ տեղեկատվության և այլ միջոցներով և արդյունքները գնահատվում են պարբերաբար:
Դրանք ներառում են, օրինակ, օգտագործողների բավարարվածության վերաբերյալ որակի ցուցանիշների կազմելը:
2. **Օգտագործողների բավարարվածության չափման տարածում:** Օգտագործողների բավարարվածության չափման հիմնական արդյունքները հանրորեն մատչելի են:
3. **Օգտագործողների բավարարվածության չափման հետևում:** Օգտագործողների բավարարվածության չափման արդյունքները հաշվի են առնվում առաջնահերթությունները սահմանելիս և արտացոլվում են վիճակագրական աշխատանքների ծրագրում: Օգտագործողների բավարարվածության չափման արդյունքներից բխող բարելավման գործողությունները, սահմանվում, առաջնահերթությամբ բաշխվում, պլանավորվում են իրականացման և հետևելու նպատակով:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Հիմնական օգտագործողների բավարարվածությունը հատուկ արտադրանքներով:** Ձեռնարկվում են հիմնական օգտագործողների բավարարվածությունը գնահատելու միջոցառումներ (օրինակ՝ օգտագործողների բավարարվածության մանրամասն հետազոտություններ / ցուցանիշներ արտադրանքի մակարդակով): Այս գնահատման արդյունքները հրապարակայնորեն մատչելի են, օրինակ՝ որակի հաշվետվություններում, համապատասխան կայքերում:

Սկզբունք 12. Ճշգրտություն և արժանահավատություն

Եվրոպական վիճակագրությունը ճշգրիտ և արժանահավատ նկարագրում է իրականությունը:

Ցուցանիշ 12.1. Սկզբնական տվյալները, միջանկյալ արդյունքները և վիճակագրական արտադրանքները գնահատվում և հաստատվում են:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վավերացման համակարգերի գնահատում:** Սկզբնական տվյալների, միջանկյալ արդյունքների և վիճակագրական արտադրանքների գնահատման և վավերականացման համակարգերն առկա են :
2. **Վավերացման ուղեցույցների գնահատում:** Գոյություն ունեն տվյալների որակի գնահատման և վավիդացիայի ուղեցույցներ: Դրանք լուծում են ճշգրտության և արժանահավատության հետ կապված հարցեր:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

3. **Գնահատման և վավերացման ընթացակարգեր:** Գոյություն ունեն տվյալների որակը համակարգված գնահատելու և տվյալների վավերացման ընթացակարգեր:
4. **Միջանկյալ արդյունքների և արտադրանքների համեմատություն:** Միջանկյալ արդյունքները և արտադրանքները վավերականությունն ապահովելու համար համեմատվում են տեղեկատվության այլ համապատասխան աղբյուրների հետ:

Ցուցանիշ 12.2. Ընտրանքային և ոչ-ընտրանքային սխալները չափվում են ու սխտեմատիկաբար փաստաթղթավորվում համաձայն Եվրոպական ստանդարտների:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Մխալների չափման և նվազեցման ուղեցույցներ և մեթոդներ:** Առկա են սխալների չափման և նվազեցման ուղեցույցներ և հայտնի են անձնակազմին:

Գործընթացի /արտադրանքի մեթոդներ

2. **Որակի ցուցանիշ (ներ):** Ճշգրտության և արժանահավատության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար ստուգվում և հրապարակվում են որակի հաշվետվություններում:
3. **Ճշգրտության և արժանահավատության վերլուծություն և գնահատում:** Ճշգրտության և արժանահավատության վերաբերյալ որակի ցուցանիշները պարբերաբար վերլուծվում և գնահատվում են վիճակագրական գործընթացը բարելավելու նպատակով:
4. **Մխալները կանխելու և նվազեցնելու ընթացակարգեր:** Ընդունելի մակարդակով սխալները կանխելու և նվազեցնելու ընթացակարգերն առկա են.
 - Ընտրանքային և ոչ ընտրանքային սխալների հիմնական աղբյուրների նույնականացումը (ընդգրկվածությունը, ընտրանքի փոփոխականության և ընտրության շեղումները, չափումը, մշակումը, չպատասխանելը և մոդելի ենթադրական սխալները) վիճակագրական գործընթացներում;
 - Առանցքային փոփոխականների համար ընտրանքային սխալների քանակավորում; նույնականացումը և գնահատումը, քանակական կամ որակական առումներով, պոտենցիալ շեղումները և անհամապատասխանությունները ոչ ընտրանքային սխալների պատճառով;
 - Մխալների ուղղման և ճշգրտման մեթոդները, ինչպես նաև դրանց նախնական և վերանայված գնահատումների միջև տարբերությունների վերլուծությունը:

5. **Ճշգրտության կատարելագործման մեթոդներ:** Վիճակագրական տվյալների ճշգրտության բարելավման մեթոդները մշակված են համաձայն մեթոդաբանական և ճշգրիտ պահանջների:

Ցուցանիշ 12.3. Վերանայումները պարբերաբար վերլուծվում են՝ սկզբնական տվյալները, վիճակագրական գործընթացները և արտադրանքները կատարելագործելու նպատակով:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Վերանայումների վերլուծության ընթացակարգեր:** Գործում են ընթացակարգեր, թե ինչպես վերլուծել արտադրանքների ճշգրտության և արժանահավատության վերաբերյալ վերանայումների արդյունքները:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

2. **Վերանայումների վերլուծություն:** Վերանայումները վերլուծվում են: Դա նպաստում է սկզբնական տվյալների, վիճակագրական գործընթացների և արտադրանքների բարելավմանը:
3. **Վերանայման վերաբերյալ որակի ցուցանիշները:** Վերանայման վերաբերյալ որակի ցուցանիշները (օրինակ՝ վերանայումների չափը և ուղղությունը) պարբերաբար հաշվարկվում են գործող չափանիշներին համապատասխան և հանրորեն մատչելի են:

Սկզբունք 13. Յուրաժամանակություն և ճշտապահություն

Եվրոպական վիճակագրությունը թողարկվում է ժամանակին և ճշտապահորեն:

Ցուցանիշ 13.1. Յուրաժամանակությունը բավարարում է Եվրոպական և այլ միջազգային թողարկման ստանդարտներին:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Համապատասխանությունը յուրաժամանակության վերաբերյալ միջազգային ստանդարտների հետ:** Վիճակագրական մարմինները համապատասխանում են յուրաժամանակության վերաբերյալ Եվրոպական և միջազգային ստանդարտների հետ:

2. **Թողարկման օրացույցի հրապարակում:** Թողարկման օրացույցը հրապարակվում է ընդգրկելով ամբողջ վիճակագրությունը, որի համար յուրաժամանակության ստանդարտները սահմանված են եվրոպական և միջազգային կանոնակարգերով և համաձայնագրերով:
3. **Յուրաժամանակության նպատակներից շեղումները:** Եվրոպական և միջազգային յուրաժամանակության նպատակներից շեղումները պարբերաբար դիտարկվում են և գործողությունների պլան է մշակվում, եթե այդ նպատակները չեն իրականացվում:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Որակի ցուցանիշը (ները):** Յուրաժամանակության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար վերլուծվում և գնահատվում և հրապարակվում է (են) որակի հաշվետվություններում:
5. **Յուրաժամանակության վերլուծություն և գնահատում:** Յուրաժամանակության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար վերլուծվում և գնահատվում է (են) վիճակագրական գործընթացը բարելավելու նպատակով:

Ցուցանիշ 13.2. Եվրոպական վիճակագրության թողարկման համար ստանդարտ օրվա ժամը հանրայնացվում է:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Թողարկման քաղաքականություն:** Թողարկման քաղաքականությունը սահմանվում և հրապարակվում է: Թողարկման քաղաքականությունը տարբերակում է տարբեր տեսակի հրապարակումներ՝ (օրինակ՝ մամուլի հաղորդագրություններ, վիճակագրական հատուկ զեկույցներ/աղյուսակներ, ընդհանուր հրապարակումներ) և դրանց համապատասխան թողարկման ընթացակարգեր:
2. **Հրապարակում ստանդարտ օրվա ժամին:** Թողարկումները հրապարակվում են ստանդարտ օրվա ժամին, որը նախապես հանրորեն հայտարարվում է:

Ցուցանիշ 13.3. Վիճակագրության պարբերականությունը հնարավորինս հաշվի է առնում օգտագործողի պահանջները:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Օգտագործողների հետ խորհրդակցումը պարբերականության վերաբերյալ:** Վիճակագրական մարմինը կանոնավոր կերպով խորհրդակցում է օգտագործողների հետ պարբերականության վերաբերյալ և հնարավորինս հաշվի է առնում նրանց պահանջները:

Ցուցանիշ 13.4. Տարածման ժամանակացույցից շեղումը նախօրոք հրապարակվում է, բացատրվում և սահմանվում է թողարկման նոր ամսաթիվ:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Թողարկման օրացույցի հրապարակում:** Թողարկման օրացույցը հրապարակվում և պարբերաբար արդիականացվում է:
2. **Ճշտապահությունը վերահսկելու և գնահատելու ընթացակարգ:** Յուրաքանչյուր թողարկման ճշտապահությունը պարբերաբար վերահսկվում և գնահատվում է:
3. **Նախապես հայտարարված ժամկետից շեղումները:** Նախապես հայտարարված ժամկետից շեղումները հրապարակվում են նախօրոք, պատճառները բացատրվում են և հայտարարվում է թողարկման նոր ժամկետը:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Որակի ցուցանիշը (ները):** Ճշտապահության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար վերլուծվում և գնահատվում և հրապարակվում է (են) որակի հաշվետվություններում:
5. **Ճշտապահության վերլուծություն և գնահատում:** Նախնական և վերջնական արդյունքների ճշտապահության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար վերլուծվում և գնահատվում է (են)՝ վիճակագրական գործընթացը բարելավելու նպատակով:

Ցուցանիշ 13.5. Ընդունելի ազդեցացված ճշգրտության նախնական արդյունքները կարող են թողարկվել այն ժամանակ, երբ համարվում են օգտակար:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

1. **Նախնական արդյունքների տարածում:** Նախնական արդյունքների տարածման հնարավորությունը պարբերաբար վերանայվում է, հաշվի առնելով տվյալների ճշգրտությունը և արժանահավատությունը:

2. **Նախնական արդյունքների որակը:** Երբ նախնական արդյունքները թողարկվում են, օգտագործողին տրամադրվում է համապատասխան տեղեկատվություն հրապարակված արդյունքների որակի մասին:
3. **Պլանավորված վերանայումների քաղաքականություն:** Արտադրանքները, որոնք ենթակա են պլանավորված վերանայումների ունեն այդ վերանայումները ընդգրկող հրապարակված քաղաքականություն:

Սկզբունք 14. Համաձայնեցվածություն և համադրելիություն

Եվրոպական վիճակագրությունը հետևողական է ներքուստ և ժամանակի ընթացքում ու համադրելի տարածաշրջանների և երկրների միջև. հնարավոր է համակցել և համատեղ օգտագործել համապատասխան տվյալներ տարբեր աղբյուրներից:

Ցուցանիշ 14.1. Վիճակագրությունը ներքուստ համաձայնեցված է և հետևողական (օրինակ, դիտարկվում են թվաբանական և հաշվապահական նույնականացումները):

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Ներքին համաձայնեցվածությունը դիտարկելու ընթացակարգեր և ուղեցույցներ:** Ներքին համաձայնեցվածությունը դիտարկելու ընթացակարգերը և ուղեցույցները մշակվում և իրականացվում են համակարգված կերպով: Անհրաժեշտության դեպքում, դրանք կառնչվեն միկրոտվյալների և ագրեգացված տվյալների, տարեկան, եռամսյակային և ամսական տվյալների, ազգային և տարածաշրջանային տվյալների, վիճակագրության բնագավառների և ազգային հաշիվների միջև համաձայնեցվածությանը և հարակից երևույթների համաձայնեցվածությանը:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

2. **Հավելյալ աղբյուրներից արտադրանքների համակցությունն ապահովելու ընթացակարգեր և ուղեցույցներ:** Գործընթացի հատուկ ընթացակարգերը և ուղեցույցները երաշխավորում են, որ տվյալների հավելյալ աղբյուրներից ստացված արտադրանքները համակցված են, ներքին համաձայնեցվածությունն ու հետևողականությունն ապահովելու համար:
3. **Որակի ցուցանիշը (ները):** Համաձայնեցվածության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար գնահատվում և հրապարակվում է (են) որակի հաշվետվություններում:

- 4. Համաձայնեցվածության վերլուծություն և գնահատում:**
Համաձայնեցվածության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար վերլուծվում և գնահատվում է (են)՝ վիճակագրական գործընթացը բարելավելու նպատակով:

Ցուցանիշ 14.2. Վիճակագրությունը համադրելի է ողջամիտ ժամանակահատվածում:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Հասկացություններում փոփոխությունների նույնականացում:**
Հասկացություններում (դասակարգումներ, սահմանումներ և թիրախային համակցություն) փոփոխությունները ի պատասխան իրականության էական փոփոխությունների, ինչպես նաև դրանց ազդեցությանը հստակորեն սահմանվում/տեսանելի են դարձվում, օրինակ՝ տարբեր վիճակագրական շարքերի համաձայնեցվածությունը դյուրինացնելու համար:

Գործընթացի /արտադրանքի մեթոդներ

- 2. Մեթոդներում փոփոխությունների բացահայտում և չափում:**
Փոփոխությունները մեթոդներում հստակորեն բացահայտվում են և դրանց ազդեցությունը չափվում է համեմատությունը դյուրին դարձնելու նպատակով:
- 3. Ժամանակագրական շարքերի ընդհատումների հրապարակում և բացատրություն:** Ցանկացած ընդհատում, որը տեղի է ունենում վիճակագրական շարքում ներկայացվում է պատճառների, հետևանքների և ժամանակի ընթացքում համաձայնեցվածության ապահովման մեթոդների հետ միասին: Բացատրությունները հրապարակայնորեն մատչելի են: Այս մեթոդները կարող են ներառել, ինչպես ամենաբարդ ընթացակարգերը (օր.՝ հին շարքեր նորերի հետ կապակցման տրամադրում) այնպես էլ ամենապարզը (օր.՝ օգտագործողի ուղեցույցներ կամ առաջարկություններ՝ տարբեր շարքերը կապելու համար):
- 4. Որակի ցուցանիշը (ները):** Համադրելիության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար գնահատվում և հրապարակվում է (են) որակի հաշվետվություններում:

5. **Համադրելիության վերլուծություն և գնահատում:** Համադրելիության վերաբերյալ որակի ցուցանիշը (ները) պարբերաբար վերլուծվում և գնահատվում է (են)՝ վիճակագրական գործընթացը բարելավելու նպատակով:

Ցուցանիշ 14.3. Տարբեր հետազոտություններում և տվյալների աղբյուրներում վիճակագրությունը կազմվում է միասնական ստանդարտների հիման վրա՝ կապված շրջանակի, սահմանումների, միավորների և դասակարգումների հետ:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Համաձայնեցվածությանը և հետևողականությանը խթանելու մեխանիզմ:** Կիրառվում է հասկացությունների ընդհանուր շտեմարան կամ համաձայնեցվածությանը և հետևողականությանը խթանելու մեխանիզմ:

Գործընթացի/ արտադրանքի մեթոդներ

2. **Ստանդարտներին համապատասխանության գնահատում:** Սահմանումների, միավորների և դասակարգումների ստանդարտներին համապատասխանության պարբերական գնահատումներ են իրականացվում և արտացոլվում որակի հաշվետվություններում:
3. **Ստանդարտներից շեղումների բացատրություն:** Սահմանումների, միավորների և դասակարգումների ստանդարտներից շեղումները բացահայտվում են և շեղումների պատճառները բացատրվում են, հատկապես կապված Եվրոպական և միջազգային ստանդարտների հետ:

Ցուցանիշ 14.4. Տվյալների տարբեր աղբյուրներից և տարբեր պարբերականությամբ վիճակագրությունը համեմատվում և համաձայնեցվում է:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

1. **Վիճակագրական արտադրանքի համեմատությունը համապատասխան տվյալների հետ:** Վիճակագրական արտադրանքները համեմատվում են այլ

- վիճակագրական կամ վարչական տվյալների հետ, որոնք տրամադրում են նմանատիպ տեղեկատվություն նույն բնագավառի / երևույթի վերաբերյալ:
2. **Շեղումների հայտնաբերում և բացատրություն:** Տարբեր աղբյուրներից ծագող շեղումները բացահայտվում են և պատճառները հստակ և հրապարակայնորեն բացատրվում են:
 3. **Վիճակագրական արտադրանքի համաձայնեցում:** Վիճակագրական արտադրանքները համաձայնեցվում են , երբ հնարավոր է:

Ցուցանիշ 14.5. Տվյալների խաչաձև ազգային համադրելիությունը ապահովված է Եվրոպական վիճակագրական համակարգի և այլ վիճակագրական համակարգերի միջև պարբերական փոխանակումների միջոցով: Մեթոդաբանական ուսումնասիրություններն իրականացվում են անդամ երկրների և Եվրոստատի միջև սերտ համագործակցությամբ:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Համադրելիության գնահատման ինստիտուցիոնալիզացիա:** Համադրելիության պարբերական գնահատումների նպատակով գործում են ստանդարտ ընթացակարգեր, որոնք համաձայնեցված են Ազգային վիճակագրական ինստիտուտների և Եվրոստատի միջև:
2. **Համագործակցություն մեթոդաբանական ուսումնասիրություններում:** Մեթոդաբանական ուսումնասիրություններն իրականացվում են վիճակագրական մարմինների միջև համագործակցությամբ:
3. **Տվյալների համադրելիության գնահատում Եվրոստատի կողմից:** Եվրոստատը գնահատում է ազգային տվյալների համադրելիությունը, օգտագործելով ազգային վիճակագրական մարմիններից հայցվող համապատասխան մեթատվյալները և որակի հաշվետվությունները:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Անհամաչափությունների վերլուծություն:** Որտեղ հնարավոր է իրականացվում է անհամաչափությունների վերլուծություն և վիճակագրական մարմինների միջև հայելային վիճակագրության հաշվետվությունները հանրայնացվում են:

5. **Հայելային վիճակագրության վերլուծություն:** Հայելային վիճակագրությունում անճշտությունները հայտնաբերվում և ուղղվում են կամ նկարագրվում, երբ հնարավոր է:

Սկզբունք 15. Մատչելիություն և պարզություն

Եվրոպական վիճակագրությունը ներկայացվում է պարզ և հասկանալի տեսքով, տարածվում է հարմար և հարմարավետ ձևով, մատչելի և հասանելի է անկողմնակալ կերպով աջակցող մեթատվյալների և ուղղորդման հետ:

Ցուցանիշ 15.1. Վիճակագրությունը և համապատասխան մեթատվյալները ներկայացվում են և արխիվացվում այնպիսի ձևով, որը հեշտացնում է պատշաճ մեկնաբանումը և իմաստալից համադրումները:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Տարածման քաղաքականություն:** Առկա է տարածման քաղաքականությունը: Քաղաքականությունն ընդգրկում է համապատասխան տարածման ասպեկտները, ինչպիսիք են տարածման սկզբունքները և սուբյեկտները, ձևաչափը և դասավորությունը, նախնական և վերջնական տվյալների մշակումը, մեթատվյալները և թողարկումը և նախնական թողարկման փաստաթղթավորված կարգավորումները:
2. **Վիճակագրության և մեթատվյալների արխիվացման քաղաքականություն:** Առկա է վիճակագրության և մեթատվյալների արխիվացման քաղաքականություն:
3. **Քաղաքականությունների առկայություն:** Տարածման և արխիվացման քաղաքականությունը հրապարակայնորեն հասանելի է:
4. **Տարածման և արխիվացման ուղեցույցներ:** Առկա են տարածման և արխիվացման վերաբերյալ ուղեցույցներ: Դրանք ներառում են վիճակագրական արտադրանքի պատրաստման և դրանց տարածման և արխիվացման ընթացակարգեր և ստանդարտներ:
5. **Ուսումնական դասընթացներ:** Վիճակագրական մարմինները անձնակազմի համար կազմակերպում են ուսումնական դասընթացներ, թե ինչպես բացատրել, հաղորդել և հրապարակել վիճակագրական թողարկումները և գրել մամուլի հաղորդագրություններ:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

6. **Փորձառությունների վերանայում:** Տարածման և արխիվացման փորձառությունները պարբերաբար վերանայվում են աշխատանքային խմբի կամ նման կառույցի կողմից:
7. **Օգտագործողների հետ խորհրդակցում տարածման վերաբերյալ:** Օգտագործողների հետ խորհրդակցվում է տարածման ամենահարմար ձևաչափերի վերաբերյալ:
8. **Հրապարակումներում ներառված համադրումներ:** Անհրաժեշտության դեպքում իմաստալից համադրումները հստակ ներառված են հրապարակումներում:

Ցուցանիշ 15.2. Տարածման ծառայությունները օգտագործում են ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաները, մեթոդները, հարթակները և բաց տվյալների ստանդարտները:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Տարածման և հաղորդակցության ժամանակակից միջոցներ:** Վիճակագրական մարմիններն օգտագործում են ժամանակակից և նպատակահարմար տեղեկատվական տեխնոլոգիաների ուղիները և ակտիվորեն ներկա են զանազան սոցիալական լրատվամիջոցների հարթակներում: Վիճակագրական մարմինների կայքերն առաջարկում են տվյալների հավաքածուներ համաձայն բաց տվյալների ստանդարտների: Բաց տվյալներում առկա տեղեկատվությունը հնարավորինս լայն է: Կայքերը պարբերաբար թարմացվում են:
2. **Համապատասխանությունը համընդհանուր ուղեցույցներին:** Կայքը և վիճակագրական տվյալների բազաները համապատասխանում են այնքանով, որքանով հնարավոր է վեբ բովանդակության հասանելիության համընդհանուր ուղեցույցներին (օրինակ, վեբ բովանդակության հասանելիության ուղեցույցներ (WCAG)):
3. **Կայք, վիճակագրական տվյալների բազաները և ինքնուրույն աղյուսակավորում:** Կայքը և վիճակագրական տվյալների բազաները վիճակագրական թողարկումները տարածելու հիմնական միջոցներն են: Դրանք դյուրին են դարձնում ինքնուրույն աղյուսակավորումը առավել համապատասխան ձևաչափերով :

4. **Տեղեկատվական ծառայություն / զանգերի սպասարկման կենտրոն:** Առկա է տեղեկատվական ծառայություն / զանգերի սպասարկման կենտրոն կազմված բանիմաց անձնակազմից՝ հարցումներին պատասխանելու և վիճակագրական արտադրանքների վերաբերյալ պարզաբանումների համար:
5. **Վերատարածման դյուրինացում:** Վիճակագրական արտադրանքները (օրինակ՝ մամուլի հաղորդագրություններ, պատրաստի աղյուսակներ, գծապատկերներ, քարտեզներ, որոնք կապված են վիճակագրության հետ, ինֆոգրաֆիկա, տեսանյութեր) և մեթատվյալները տարածվում են օգտագործելով գործիքներ և ձևաչափեր, որոնք դյուրինացնում են լրատվամիջոցների և որևէ այլ օգտագործողների կողմից վերատարածումը:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

6. **Համապատասխան ձևեր և ուղիներ:** Համապատասխան տարածման ձևերը և ուղիները (օրինակ՝ սոցիալական լրատվամիջոցները, առցանց ֆորումը տարբեր օգտագործողների համար) օգտագործվում են՝ առավել լավ հասկանալու և որոշակի արդյունքները համեմատելու և տարբեր օգտագործողների կողմից դրանց օգտագործումը դյուրինացնելու համար:
7. **Հրապարակումների համացանկ:** Հրապարակումների համացանկը հասանելի է օգտագործողների համար վիճակագրության մարմինների կայքերում:

Ցուցանիշ 15.3. Պատվերով նախագծված վերլուծությունները տրամադրվում են, երբ հնարավոր է և հանրությունը տեղեկացվում է:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Պատվերով նախագծված վերլուծությունների քաղաքականություն:** Պատվերով նախագծված վերլուծությունների տրամադրման քաղաքականությունն առկա է:
2. **Պատվերով նախագծված վերլուծությունների հրապարակում:** Պատվերով նախագծված վերլուծությունների ցանկն առկա է վիճակագրական մարմինների կայքում և , եթե հնարավոր է, հանրայնացվում են:
3. **Պատվերով նախագծված վերլուծությունների հայցման ծառայություն:** Առկա է ծառայություն, որը հնարավորություն է տալիս օգտագործողներին հայցեր ներկայացնել պատվերով նախագծված վերլուծությունների համար:

4. **Առցանց պատվերներ ներկայացնելու գործիքներ:** Գործում են պատվերով նախագծված վերլուծություններ հայցելու առցանց գործիքներ:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

5. **Պատվերով նախագծված արտադրանքների տրամադրում:** Հնարավորության դեպքում պատվերով նախագծված արտադրանքները տրամադրվում են հայցման հիման վրա:

Ցուցանիշ 15.4. Մուտքը միկրոտվյալներին թույլատրվում է հետազոտական նպատակներով և ենթակա է հատուկ կանոնների և արձանագրությունների:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Միկրոտվյալներ մուտք գործելու կանոններ կամ արձանագրություններ:** Միկրոտվյալներ մուտք գործելու կանոնները կամ արձանագրությունները հասանելի են: Կանոնները կամ արձանագրությունները հստակ սահմանում են մուտքի բոլոր պայմանները:
2. **Կանոնների կամ արձանագրությունների առկայությունը:** Կանոնները կամ արձանագրությունները մատչելի են վիճակագրական մարմինների կայքում:
3. **Միկրոտվյալներ մուտք գործելու պայմանները:** Վիճակագրական մարմինները ապահովում են, որ միկրոտվյալներ մուտք գործելու կառավարող պայմանները պարզ է և լավ հասկանալի լինեն ինչպես ներսում , այնպես էլ դրսում:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Անհատական մոտեցում:** Միկրոտվյալների յուրաքանչյուր հայցում մշակվում է անհատապես հետևելով կանոններում կամ արձանագրություններում սահմանված մուտքի պայմաններին:
5. **Հասանելի միկրոտվյալների շրջանակը և համապատասխանությունը:** Միկրոտվյալների յուրաքանչյուր հայցման շրջանակը և համապատասխանությունը ստուգվում և հաստատվում է ներքին կանոնների համաձայն:
6. **Գաղտնիության պահպանում:** Անհատների կամ ձեռնարկությունների անանունությունը պաշտպանված է (օրինակ՝ գիտական օգտագործման ֆայլերի և հանրային օգտագործման ֆայլերի օգտագործմամբ):

7. **Ապահով միջավայր:** Վիճակագրական մարմինները հետազոտողներին տրամադրում են ապահով միջավայր (օրինակ. ապահով կենտրոններ) միկրոտվյալներ մուտք գործելու համար՝ հետևելով համապատասխան օրենսդրությանը:
8. **Հեռահար մուտքի հնարավորություններ:** Առկա են հեռահար մուտքի հնարավորություններ համապատասխան վերահսկումներով:
9. **Հետազոտողներին խորհրդատվություն:** Հետազոտողները պարբերաբար խորհրդատվություն են ստանում միկրոտվյալներ մուտք գործելու կանոնների կամ արձանագրությունների համապատասխանության և արդյունավետության վերաբերյալ:

Ցուցանիշ 15.5. Արտադրանքներին վերաբերող մեթատվյաները կառավարվում և տարածվում են վիճակագրական մարմնի կողմից Եվրոպական ստանդարտների համաձայն:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

1. **Մեթատվյալների համապատասխանությունը Եվրոպական ստանդարտներին:** Մեթատվյալների բովանդակությունը, կառուցվածքը և տարածումը համահունչ են ESS ստանդարտներին, այսինքն՝ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքին (SIMS):
2. **Մեթատվյալներն արդիականացնելու և հրապարակելու ընթացակարգեր:** Մեթատվյալները պարբերաբար արդիականացվում են: Արդիականացման ընթացակարգերը պարզ և հայտնի են անձնակազմին:
3. **Մեթատվյալների որակի ապահովում:** Մեթատվյալների որակի ապահովման կարգը առկա է և անձնակազմը տեղեկացված է:
4. **Մեթատվյալների վերաբերյալ ուսումնական դասընթացներ անձնակազմի համար:** Անձնակազմի համար վիճակագրական մարմինը կազմակերպվում է մեթատվյալների վերաբերյալ ուսումնական դասընթացներ:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

5. **Մեթատվյալների տարածում:** Բոլոր վիճակագրական արտադրանքները տարածվում են համապատասխան մեթատվյալների հետ միասին արտադրանքներն ավելի լավ ընկալելու նպատակով:

Ցուցանիշ 15.6. Օգտագործողները տեղեկացվում են վիճակագրական գործընթացների մեթոդաբանության մասին, ներառյալ վարչական և այլ տվյալների օգտագործումն ու ինտեգրումը:

Ինստիտուցիոնալ մեթոդներ

- 1. Որակի հաշվետվությունների արտադրության պլանավորում:** Ստանդարտացված, արդիական, օգտագործողին ուղղված որակի հաշվետվությունների պարբերական արտադրությունը և մեթոդաբանական փաստաթղթերը ներառված են վիճակագրական մարմնի աշխատանքային ծրագրում:
- 2. Վիճակագրական գործընթացների մեթոդաբանությունը:** Վիճակագրական գործընթացների մեթոդաբանության նկարագրությունը օգտագործողների համար հասանելի է օգտագործողին ուղղված որակի հաշվետվություններում և այլ մեթոդաբանական փաստաթղթերում:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

- 3. Մեթոդաբանության հրապարակում:** Վիճակագրական գործընթացների համար պատասխանատու անձնակազմը պատրաստում է համապատասխան մեթոդաբանության փաստաթղթեր և աջակցում դրանք հանրորեն հասանելի դարձնելու համար:

Ցուցանիշ 15.7. Օգտագործողները տեղեկացված են վիճակագրական արտադրանքների որակի վերաբերյալ՝ համաձայն Եվրոպական վիճակագրության որակի չափանիշների:

- 1. Որակի հաշվետվության Եվրոպական վիճակագրական համակարգի /ԵՎՀ/ ստանդարտներ:** Օգտագործողին ուղղված որակի հաշվետվությունները հիմնված են ԵՎՀ-ի որակի հաշվետվողականության ստանդարտների և ուղեցույցների վրա: Որակի հաշվետվողականությունը հետևում է ԵՎՀ-ի ստանդարտին՝ Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքին (SIMS), ինչպես նաև համապատասխան ուղեցույցներին և ձեռնարկներին:
- 2. Որակի հաշվետվությունների հրապարակման կենտրոնացված մշտադիտարկում:** Որակի հաշվետվությունների հրապարակումը կենտրոնացված մշտադիտարկվում է որակի կառավարման ստորաբաժանման կողմից:

3. **Որակի հաշվետվությունների առկայությունը:** Որակի հաշվետվությունները առկա են վիճակագրական մարմինների կայքերում:

Գործընթացի/արտադրանքի մեթոդներ

4. **Որակի հաշվետվությունների հրապարակում:** **Վիճակագրական** գործընթացների համար պատասխանատու անձնակազմը պարբերաբար նախապատրաստում և հրապարակայնորեն մատչելի է դարձնում օգտագործողին ուղղված որակի հաշվետվությունները վիճակագրական մարմինների կայքերում: